



**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԵՐԵՄՆԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ**

Տակավին սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռը ապրում էր առավել աշխույժ կյանքով: Արդեն ժամանում էին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության երեսնամյակի հանդիսությունների մասնակիցները՝ հոգևորական և աշխարհական հյուրեր բոլոր մայրցամաքներից:

Կոստանդնուպոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը գլխավորում էր Հայաստանյայց Եկեղեցու թեմակալ առաջնորդների և թեմական պատգամավորների բազմամարդ պատվիրակությունը:

Վրաց եղբայր ժողովուրդը հանդիսություններին մասնակցում էր Վրաց Օրթոդոքս Եկեղեցու պատվիրակությամբ, որը գլխավորում էր Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը, իսկ Ռուս Պրավոսլավ թուր Եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էր Տ. Ֆիլարետ Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտը և Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների ղեկավարը: Նա ներկայացնում էր Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին:

Հանդիսությունների ժամանակային ընդգրկումը մեծ էր՝ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը, ուստի անհրաժեշտ է քայլ առ քայլ հետևել ընթացքին՝ ամբողջական պատկերացում կապմելու համար:

«ՎԱՐՂԱՆԱՆՔ» ԳՈԲԵԼԵՆ ԳՈՐԳԻ ԲԱՅՈՒՄԸ

Խորհրդանշական է, որ Վեհափառ Հայրապետի գահակալության պաշտոնական հանդիսությունները սկսեցին «Վարդանանք» գորբելենի բացումով, որովհետև ծանոթ է Նորին Սրբության պաշտամունքը արվեստի նկատմամբ:

Սեպտեմբերի 26-ին, երեկոյան, Վեհարանի հանդիսությանց դահլիճը լեցուն էր Էջմիածնի և Երևանի գեղարվեստասեր բազմությամբ: Բացի հոգե-



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Վեհափառ Հայրապետը և տիկին Վիդեա Արսւնյանը կտրում են գրեզնի բացման ժապավենը (26 սեպտեմբերի 1985 թ.)

վորական հյուրերից ներկա էին նկարիչներ, ճարտարապետներ, բանաստեղծներ: Քիչ հետո Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մոտեցավ դահլիճի ժապավենափակյալ դռանը: Ապա Նորին Սրբությունը մկրատով կտրեց ժապավենի մի ծայրը և այն փոխանցեց գոբելենի մեկենասի՝ տիար Մելանկտոն Արսլանյանի տիկնոջ՝ Վիոլետա Արսլանյանին, որ Մայր Աթոռ էր ժամանել հատուկ այս առիթով: Ապա շքախումբն ու բազմությունը մոտեցան դահլիճի հարավային պատին, ուր իշխում էր Վարդանանց պատերազմը խորհրդանշող պատկերը: Դեռ երեք տարի առաջ գոբելենի նախատիպ նկարը ցուցադրվեց Երևանի նկարչի տանը և մեծ հետաքրքրություն առաջացրեց արվեստասերների մեջ: Առաջին իսկ հայացքից վարմանալի էր գոբելենի գունային և արտահայտչական հարավատությունը նախատիպ նկարին:

Հանդիսատեսների հիացական հայացքի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը: Նա ասաց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԳՈԲԵԼԵՆԻ
ԲԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Տիրոջ օրհնությամբ այսօր բոլորս պատմական մի օր ենք ապրում: Այս օրը պատմական է հատկապես ինձ համար, որովհետև այս գորգի այստեղ վետեղումը նկատում եմ մեծագույն պարզև՝ ընծայված ինձ՝ իմ գահակալության 30-ամյակի առիթով: Ես առաջին հերթին իմ խոր գնահատանքի խոսքը ուզում եմ ուղղել այս նկարը ստեղծագործողին, մեր սիրելի նկարիչ Գրիգոր Խանջյանին, որը շուրջ երկու տարի աշխատեց այս գործի վրա, և աշխատեց ոչ միայն իբրև տաղանդավոր նկարիչ, այլ դրեց նաև իր հավատարմոր հոգին: Առանց հավատքի ոչ մի մեծ ստեղծագործություն կարելի չէ իրագործել, Մեր համոզումն է այս: Եվ ահա այդ հավատքով ու մեր պատմության մեծ իրադարձությունից ոգեշնչված, Գրիգոր Խանջյան ուսումնասիրեց դեպքերին ժամաակակից հեղինակ Նիլզեի ծանոթ գործը, և ահա այսպես է, որ ծնունդ առավ այս հոյակապ գորգը: Սակայն հարկ է նաև նյութական միջոցներ ապահովել, որպեսզի իրագործվի այս մեծ գաղափարը: Եվ ահա մենք ունեցանք մեծաեղբի նվիրատու հանձինս Մելանկտոն և Վիոլետա Արսլանյանների: Դժբախտաբար պարոն Մելանկտոնը առողջական պատճառներով չկարողացավ գալ: Այս պահին աղոթում ենք առ Աստված, որ նրա առողջական վիճակը բարվոքվի. ո՛վ գիտե, երբեմն հրաշքներ էլ են պատահում, որպեսզի գա անձամբ տեսնի այստեղ իր գորգը: Մեր երախտագիտությունը, Մեր շնորհակալությունը կներկայացնենք ավսիվ տիկին Ձեզ, Ձեր ամուսնուն և ընտանիքի անդամներին:

Այս գորգը գործողն է պարոն Օլիվյե Պենտոնը Օբյուսոն քաղաքից, Փարիզից 4—5 ժամ հեռավորության վրա գտնվող փոքրիկ մի քաղաք, մասնագիտացած նման գորգեր գործելու մեջ: Այդ գործարանատերերից մեկն է ինքը՝ պարոն Օլիվյեն, և իր եղբայրը՝ պարոն Ֆրանսուան: Նրանք ստանձնեցին այդ գործի կատարումը, և կատարեցին մեծ վարպետությամբ, ոչ միայն տեխնիկական իմաստով, այլ հոգիով աշխատեցին: Երբ Գրիգոր Խանջյանը առաջին անգամ տեսավ գորգը՝ վարմացավ, թե ինչպես այս Ֆրանսիացի մարդիկ կարողացել են զգալ, հոգիով զգալ այս պատմական իրադարձության ոգին, խորհուրդը: Բայց կարծում եմ, որ դա իրականացավ, որովհետև Ֆրանսուան և Օլիվյեն քրիստոնյա մարդիկ են. հասկացան, որ աշխարհի պատմության բեմի վրա առաջին մարտն է, որ մղվեց հանուն Քրիստոսի հավատքի հաղթանակի: Այս գործը վերջացավ այս տարվա հունիս ամսին, և պետք է առաքվեր



«Վարդանանք» գորեհնի առջև. Վեհափառ Հայրապետ, ձախից՝ տիկին Վիղենա Արպանյան (Վեհենա), Գրիգոր Խանջյան (հեղինակ), աջից՝ տեր և տիկին Գոբձունյաններ (Փարիզ) և գործող վարդապետ Օլիվյե Պենտոն (26 սեպտեմբերի 1985 թ.)



Վեհափառ Հայրապետը բացատրում է գրքի նիսի խորհուրդը
(26 սեպտեմբերի 1985 թ.)

Էջմիածին, բայց պարոն Պենտոնի առաջարկով ցուցադրվեց Չվիցերիո Մոնտրեո քաղաքի միջազգային մեծ ցուցահանդեսում՝ նվիրված գոբելենների ցուցադրման: Բնականաբար Մենք համաձայն գտնվեցինք: Պետք է հպարտությամբ ասել, որ այս գորգը բացառիկ հաջողություն է ունեցել այդ միջազգային ցուցահանդեսում: Գովասանական արձագանքներ եղան օտար մամուլում: Մեկ օրինակ. Փարիզի ռադիոն այդ ցուցահանդեսին նվիրել է հաղորդում և ամբողջ ցուցահանդեսին նվիրված 15 րոպեից 5 րոպեն նվիրված է եղել միայն այս գործին:

Այստեղ, ինչպես տեսնում եք, ներկայացվում է Ավարայրի ճակատամարտը, բայց ո՞ր պահը ճակատամարտի: Այս հարցն էր մեր առջև դրված: Մի քանի անգամ խորհրդակցության նյութ դարձավ իմ և Գրիգոր Խանջյանի միջև: Խանջյանը այն գաղափարը ունեցավ և պաշտպանեց, և ես էլ համաձայնություն տվի, որ ճակատամարտի վերջին պահը ներկայացվի, այսինքն այն պահը, երբ, տեսեք, հայերը շրջապատված են պարսիկներից լամեն կողմից և գտնվում են հուսահատված վիճակի մեջ: Դա այն պահն է, երբ Վարդան և իր քաջերը նահատակվում են: Վարդանանք ոչ թե պարտվեցին, այլ նահատակվեցին: Նահատակության գաղափարն է, որ հատկապես ընդգրկված է այստեղ: Եվ կարծում եմ, չափազանց ցածր չեմ լինի, եթե ասեմ, որ Հայաստանյայց Եկեղեցվո հիմքը Վարդանանց պատերազմի նահատակությունն է: Եվ եթե կուզեք, մի անձնական զգացումն էլ ավելացնեմ: Ամեն ինչ գեղեցիկ է այստեղ, ամեն անկյուն երկար կարելի է դիտել, խորհրդածել: Ինձ առանձնապես հուզում է հոյակապ կերպարը Ղևոնդ քահանայի՝ Ղևոնդ երեցի: Խանջյանի սեփական մտահղացումն է եղած կենտրոնական տեղ տալ Ղևոնդ երեցին: Եվ այս պատահական երևույթ չէ, պատմականորեն հայտնի է բոլորին, ովքեր քիչ թե շատ մեր պատմությունը գիտեն, որ Ղևոնդ երեցը առաջինը եղավ թշնամու դեմ ընդվզող և սուրը բարձրացնող, Վարդան Մամիկոնյանից առաջ և Ավարայրի ճակատամարտից առաջ: Որով պատահական չէ, որ Ղևոնդ երեցը պատկերված է այսպիսի հաղթական հոյակապ կերպարով՝ խաչի խորհուրդը կուրծքին, և պաշտպանության սուրը ձեռքին:

Կրկին անգամ իմ խորունկ գոհունակությունն եմ ներկայացնում և փառք եմ տալիս Աստծուն, որ իմ օրոք հնարավոր եղավ իրականացնել նաև այս մեծ գործը:

Բարի վայելում ազգիս հայոց:

Երկարատև ծափողջույններից յիստո խոսքը տրվեց արվեստաբան տիկին Մանյա Ղապարյանին: Հարգելի արվեստաբանը նախ ընդգծեց գործի գաղափարական կողմը: «Առաջին հիմնական գաղափարը,— ասաց նա,— այն է, որ հայ ժողովրդի պատմությունը բազում վարդանանքների պատմություն է, անանուն վարդանանքների, որոնց վրա է խարոխված այսօր մեր Սովետական Հայաստանը»: Երկրորդ կարևոր գաղափարը, ըստ արվեստաբանի, այն հայրենասիրական լիցքն է, որ կա այս ստեղծագործության մեջ: Մարմնավորված են հայ մտքի հսկաներ, որոնք իրենց ստեղծագործությունը և կյանքը նվիրաբերեցին իրենց ժողովրդին. նրանք մասնակիցներն են շարունակվող վարդանանքների: Ապա տիկին Ղապարյանը շնորհակալություն հայտնեց «Վարդանանք» գոբելենի գաղափարը հղացած Վեհափառ Հայրապետին, «որովհետև,— ասաց նա,— այս գոբելենը շարունակությունն է այն հարստությունների, որոնք մեկտեղված են Մայր Աթոռում, որովհետև Վեհափառ Հայրապետը այս երեսուն տարիներին ունեցավ ոչ միայն ժողո-



Գեղի Վեհարան. Վեհափառ Հայրապետ, վրաց Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ., Աւենապատիկ Տ. Շուրիք Պատրիարք և միաբույրիտ Ֆիլարետ (29 սեպտեմբերի 1985 թ.)

վըրդական, խաղաղասիրական և հայրենասիրական գործունեություն, այլև ջանք թափեց շենացներու և հարստացներու հայ արվեստը:

Ապա հանդիսականները բռուն ծափերով ողջունեցին ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանին, որը մի քանի խոսքով պատմեց «Վարդանանք»-ի ստեղծման հանգամանքների մասին և շորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, որ հետևողական եղավ այս մտահղացումը իրականացնելու գործում:

Հետո ներկաները մեծ հետաքրքրությամբ լսեցին «Վարդանանք» գեղանկարը գորելենի վերածող արհեստանոցի տիրոջ՝ պարոն Օլիվյե Պենտոնի խոսքը: Նա պատմեց գորելենի արվեստի մասին Ֆրանսիայում, ապա անդրադարձավ «Վարդանանք» կտավի գեղարվեստական արժեքին և շեշտեց, որ այս գործը առիթ եղավ, որ ինքը ավելի մոտիկից շփվի հայ մշակույթի ու ժողովրդի հետ և պատրաստակամություն հայտնեց՝ հաճույքով աշխատելու նոր իրագործումների վրա:

Հանդիսությունն ավարտվեց ոգևորության և գեղագիտական զգացումներով հագեցված մթնոլորտում:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Սեպտեմբերի 29-ին, կիրակի, Վարագա Սուրբ Խաչի տոնին, առավել քան երբեք բազմամարդ էին Մայր Աթոռի շրջափակն ու Մայր տաճարը: Բազմահազար ուխտավորներ եկել էին մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության երեսնամյակին նվիրված հանդիսավոր սուրբ պատարագին: Պատարագիչն էր Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Սուրբ պատարագի հոգեպարար արարողության ընթացքում սրբական հայրը հավուր պատշաճի քարոզ կարդաց՝ անդրադառնալով Վեհափառ Հայրապետի երեսնամյա գահակալությանը:

Պատարագիչ սրբականն ասաց.

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ

«Փառք քեզ Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Պարզ ու խորունկ այս աղոթքը կուգա Հայ Եկեղեցւոյ ժամերգութենէն: Դարերու խորքէն: Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի կարգավորած հայաշունչ և հայաբարբառ պաշտամունքէն:

Ու դարե դար, ու սերունդե սերունդ, հավատավոր հայ շինականը, ինչպես նաև հայ քահանան և աստվածաբանը, կրկնած են հաճույքով ու հավատքով. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Ամեն քրիստոնյա, ինչ ազգի ալ պատկանի, բնականորեն նույն մաղթանքը կփսփսա և կամ բարձրաձայն կաղաղակե, երբ պահ մը կու՛նգ կառնե և կանդրադառնա իր կյանքի դժբախտ և կամ ուրախ ու երջանկացնող պատահարներուն վրա:

Ու հայ մարդը, ու հայ ազգը մանավանդ, իրավունքով ու ներքին բնական մղումով, իր օրապահիկ հացն ու ջուրը վայելելու շնորհակալությամբ, կդառնա դէպի կյանքին աղբյուրը, տիեզերքի արարիչը, և կի:ս:տարարե. «Օրինեալ է Աստուած. գովեալ է Աստուած»:

Մեր ժողովրդի դարերու պատմությունը լեցուն է չար պատահմունքներու միջադեպերով:

Հալածանք, կոտորած, ավերած: Բռնակալ ու բարբարոս աշխարհակալներու պատճառած զուլումն ու կործանումը պետք է ջնջած լինեին ու մահացուցած մեր ժողովուրդը, երկար ժամանակ առաջ:

Եվ սակայն, կտեսնենք որ չարը, թշնամին, ինչ անունով որ եւ ներկայանա պատմության բեմի վրա, ինք կկործանի, կանհայտանա, որովհետև հայուն պայքարը եղած է միշտ հոգիի պայքար: Եվ հայ հոգիին շունչը եղած է Աստվածաշունչը: Եվ ո՞վ կարող է կործանել Աստուծո շունչը, և այս հավատքը, և այս համոզումը փոխանցված է զավակե զավակ, սերունդե սերունդ: Եվ դարձած է մեր արյան կանչ: Մեր հոգիի ռավմերգ:

Հավատացած ենք, որ հոգիի կյանքը ստեղծագործ է ու կառուցող ու շինարար: Եվ այդ պատճառով, ամեն սերունդ իր տաղանդին, իր շնորհին արգասիքը եղող ստեղծագործություններով ճոխացուցած, հարստացուցած է մեր ժողովրդին կյանքը և պատմությունը. ճարտարապետական կոթողներով և քանդակներով, նկարչական, մանրանկարչական արվեստի նկարչապարզումներով. քերթողական, գրական սեռերու պատումներով, հերոսապատումներով. երաժշտական այլպան հորինումներով. ուրախության, տրտմության պարեղանակներով: Եվ յուրաքանչյուրը հայ երկնակամարի վրա կփայլի, կարձագանքե, իբրև աստվածապարզ և օրհնաբեր տաղանդ, հանձար և ստեղծագործ հոգի: Եվ հոգիի այս պատերազմի բանակին ի տես, որուն մաս կկազմե մեզմե յուրաքանչյուրը, մեր սրտի խորքեն կպոռթկա նույն պարզ ու խորունկ աղոթքը. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Այսօր բացառիկ օր մըն է: Մեր ներկա սերունդին ևս Աստված պատեհությունը տված է, ցավի և ուրախության արցունքներու մեջեն իսկ, անդրադառնալու, որ կապրինք դեռ իբրև ազգ, ու դեռ կաճինք, ու դարաբաղցիին ըսածին պես. «Կանք, էլի: Ապրում ենք: Աճում ենք: Էլ ի՞նչ ենք ուզում: Աստված արևշատ անի մեր կաթողիկոսին, Վազգեն Առաջինին»:

Եվ արդարև, պատմական հայրենի հողի վրա ամբողջ տասնվեց դարեր անսասան կանգնած Սուրբ Էջմիածնի հայակերտ կամարներուն ներքև, հանուն համայն հայության, կտոնախմբենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո 130-րդ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տէր, Տէր, Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի արդյունաշատ գահակալության երեսնամյա հոբելյանը:

Ուրախալի երևույթ է, որ Հայկական Հանրապետության հովանավորության ներքև, և Հայ Եկեղեցվո գործերու կից կրոնական խորհրդի անդամոց ներկայության կգործադրվին հայտագիրերը այս բացառիկ հանդիսության:

Պատմական տվյալներու համաձայն, Հայոց Եկեղեցվո 130 Հայրապետներեն միայն վեցը, Աստուծո ողորմությամբ, Գրիգոր Լուսավորչի Աթոռին վրա իբրև Հովվապետ Ամենայն Հայոց, ծառայած են, ավելի քան երեսուն տարիներ:

1. Սահակ Պարթև, 49 տարի, 387—436
2. Պետրոս Գետադարձ, 39 տարի, 1019—1056
3. Գրիգոր Բ Վկայասեր, 39 տարի, 1066—1105
4. Գրիգոր Գ Պահլավունի, 53 տարի, 1113—1166
5. Կոստանդին Բարձրբերդցի, 46 տարի, 1221—1267
6. Վազգեն Առաջին, 1955-են սկսյալ, 30 տարի, որուն համար ամեն պատարագի մատուցման ընթացքին կաղոթենք. «Շնորհեսցես մեզ ընդ երկայն

աուրս, ուղիղ վարդապետութեամբ», որպեսզի միշտ ի ձեռին բռնենա. «Գաւազան ծաղկեալ՝ յարմատոյն Յեսսեայ»:

Եկած ենք որդիական սիրով մեծարելու Գահակալը, որ է՝ «Ծառայ Յիսուսի Քրիստոսի՝ ողորմութեամբն Աստուծոյ, և կամօք ազգի՝ եպիսկոպոսապետ և կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համապական նախամեծար Աթոռոյ Այրարատեան մայր եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի», և որ, երեք տասնամյակներ առաջ՝ 1955 հոկտեմբերի 2-ին Իջման Սուրբ Սեղանին առջև ծնրադիր, խորագագ հոգիով և ջերմ հավատքով սա աղոթքը արտաբերեց. «Տէր Աստուած Հարցն մերոց, ուստ ինձ առնել վկամա քո և ուղղեալ գնացս իմ ի ճանապարհս քո արդարութեան: Լեր ինձ օգնական և մարտակից, վասն շինութեան և անասանութեան Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեայց, վասն լուսաւորութեան և հոգւոյ մխիթարութեան հաւատացեալ ժողովրդեան Հայոց, և վասն բարօրութեան Հայրենեաց մերոց»: Եվ այս հոգիին համար մենք կմրմնջենք դարձեալ. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ»: Ու կտեսնենք պատկերը կյանքին:

Ավանդապաշտ իր ծնողաց՝ հեղաբարո Աբրահամի և դաստիարակ Սիրանուշի հարկին տակ աճող, և սկառուտական. «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանին հավատարիմ, ու բարձրագոյն ուսմանց և ընկերային գիտութեանց հետամուտ եղող երիտասարդ Լևոն-Կարապետը՝ ըմբռնած էր իմաստը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ» պատգամին:

Եղավ ուսուցիչ. եղավ երիտասարդության զգացումին, դատումին խոսակը: Հրապարակախոսը: Հրատարակեց և խմբագրեց «Հերկ» ամսագիրը: Գրեց գիրքեր: Իսկ Գրիգոր Նարեկացիի «Մատեան»-են հատվածներ թարգմանեց ռումաներենի:

Իր ներաշխարհի ձայնին անսարով, կուսակրոն քահանա ձեռնադրվեցավ 42 տարի առաջ, ահավոր պատերազմի օրերուն, Հունաստանի հայ գաղթականի խրճիթ-մատուռին մեջ: Եվ իր քարոզին բնաբան առավ. «Տէր, եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո»: Եվ իր հոգևորական կյանքի ամբողջ շրջանին օրհներգեց արարչության փառքը:

Լուսավորչահաստատ Մայր տաճարի հմայքեն, անոր հոգևոր և ազգային առաքելութենէն ոգևորված, անվարանորեն հայտարարեց. «Պետք է պահպանել Հայ Եկեղեցւոյն ազգային ավանդութիւնները, ազգային ծեսերն ու լեզուն, հայ եկեղեցական երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, մանրանկարչութիւնը»: Եվ իր շուրջը հավաքված կգտնենք տաղանդաշատ, արվեստագետ սպասարկուները մեր մշակույթին:

Եվ խոր համոզումով կպատգամե.

«Մենք իբրև Հայոց Հայրապետ, Մեր սեպուհ պարտքը կնկատենք անդադար հնչեցնել, հապար խոսքերով, հապար ձևերով լսելի դարձնելու համար մեր օրերու հոգևոր-ազգային կյանքի գերագոյն ճշմարտութիւնը. թե՛ հայության միակ ապահով խարխիւը աստվածակառույց Սուրբ Էջմիածինն է, և հայ հողը հայրենի: Հայաստան, հայ ժողովուրդ, Հայոց պատմութիւն, իրարմե անբաժան են, և միասին անբաժան են Սուրբ Էջմիածնէն»:

Կամք, միտք, սիրտ ու ժամանակ հատկացուց Հայրապետանոցի, վանքերու, եկեղեցիներու բարեպարզման գործին:

Մեկ կողմէ՝ Հայաստանի հայրենի պետության սահմանած վարկով, վերականգնվեցան բազմաթիվ արժեքավոր կոթողներ. մյուս կողմէ՝ Վեհափառ Հայրապետի ապահոված բարերարներու օժանդակությամբ, բարեպարզվեցան, կառուցվեցան և վերանորոգ պայծառացան քսանէ ավելի վանքեր, ծխական

եկեղեցիներ, աղոթատեղիներ, հուշարձաններ, թանգարան, գանձատուն, վանատուն-հյուրանոց, «Հայկաշէն» ամառանոց:

Հոգևոր սպասարկուներու, դպրոցի և ուսման նկատմամբ տաճած սիրուն փափաքեցալ ոգևորել ուսանողները հոգևոր ճեմարանի: Հետամուտ եղալ որ ուսանողները ըլլան մարմնով տոկուն, միտքով ուշիմ և արթուն, և կարենան ըմբռնել իրենց շրջապատը, դարբնելով իրենց բարոյակուն նկարագիրը, հետամուտ լինելով իրենց կարգապահության, և մնալով հավատարիմ հանդեպ Եկեղեցիին և հայրենիքին:

Անվարան և ջերմաշունչ ոգիով կոչ ըրալ աշխարհով մեկ ցրված իր վավակներուն, պահպանելու Հայ Եկեղեցւո միությունը, ամբողջությունը, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ, և մեր Եկեղեցւո կանտոններուն, ավանդություններուն համապատասխան կանոնավորությամբ:

Հայրապետի իր հոգին տագնապող և իր սիրտը ճենճերող հարցերուն մեջէն, Անթիլիասի դիրքավորումը և Երուսաղեմի Աթոռին շուրջ ստեղծված անբաղձալի կացությունը, «սև ամպերու պես դիպված», կիսաթարն դիմագիծը մեր ժողովուրդին առաքինություններուն: Ան չի կրնար հավատալ որ անձնական կամ խմբակցական հետամտումներ պիտի տնայես հաջողին անջնջելի կնճիռներ ակոսել մեր ժողովուրդի մաքուր ճակատին, և անոր ստեղծագործ հոգիին ոսկեսար համայնապատկերին մեջ: Ուստի, լավատես իր հոգիով կաղոթե՛ «աստուածային և երկնաւոր ջնորհի» մը հեղումին, որպեսզի մեր Եկեղեցին ամբողջական նվիրումով ծառայե մեր ցրված ժողովուրդի փրկության և Տիրոջ փառքին համար:

Ավելի քան երկտասնյակ մը առիթներով, հայրապետական ցուպն ի ձեռնին, իր կատարած շնորհաբեր այցելությանց ընթացքին, իր քարոզներով և հորդորակներով, ամրապնդեց հույսն ու հավատքը իր վավակներուն, շեջտելով թե՛ «Մեր ազգը, մեր ժողովուրդը բացառիկ այն ազգերն է, որ ներքին հոգեկան տոկունությունը ունի պահպանելու իր ինքնությունը, իր կրոնական հավատալիքները, իր մայրենի լեզուն, իր մշակութային արժեքները, իր հայրենաբաղձ հոգին»: Նաև թե՛ հոգեկան արժեքներով հարուստ մեր ժողովուրդը, իր կորովին և իր խիզախումներուն ևս գիտակից, առակ է ապրելու ներկայի և ապագայի տեսիլքով:

Եվ այդ պիտի կարողանա ընել առավելապես իր հավատքով, իր մշակույթով, իր ստեղծած հին և նոր արժեքներով:

Եվ նույն խանդավառությամբ ան ավետեց թե՛ երբեմնի «ողբի ու որբի» հայրենիքը վերածված է «հույսի ու լույսի», աշխատանքի ու կառուցումի ներշնչարան մայր հողի, ազգային մշակույթով ծաղկուն նոր հայրենիքի:

Վերածնված ու հպորացած Սովետական Հայաստանը իրապես ամուր պատվանդանն է մեր ազգի ապագա երազանքներու իրականացման: Եվ մենք, այսօր, իբրև ժողովուրդ, ավելի ամուր կանգնած ենք ապատ հողին վրա մեր **Մայր-Հայրենիքին**:

Ի՛նչ հրաշալի վուզորդություն. «**Մայր Հայրենիք**»: Ոչ մեկ ուրիշ ալգ իր լեզվին մեջ ունի այս վուզորդությունը, «**Մայր-Հայրենիքին**»:

Իր հովվապետական այցելություններու ժամանակ խորապես մխիթարվեցալ, տեսնելով սփյուռքի տարածքին, գործունեությամբ աշխույժ համայնքային եկեղեցիներու շեն ու բարգավաճ վիճակը, իր հոտին մեջ վորավոր քրիստոնեական հավատքը, հայկական ոգիի ջերմությունը, հավատարմությունը հանդեպ Սուրբ Էջմիածնի և վերածնած հայրենական երկրին:

Ու պատգամեց մեր Տիրոջ բառերով, որ «Հոգի առաւել է քան ցմարմին»,

և «Հոգին է կենդանարար», կենդանություն և կյանք տվող: Այդ հոգին է, որ կարժևորե կյանքը, աշխարհը, պատմությունը, և կառաջնորդե հույսի և հավերժության կյանքին:

Եվ մարդկային ընկերության և ազգերու համերաշխ գոյակցության տեսակետեն ան կհավատա որ հետզհետե պորացումովն ու տարածումովը էքումենիկ շարժումին, այսինքն քրիստոնեական համաշխարհային եղբայրության, մարդկային ընկերությունը պիտի կարողանա ապահովել մարդկության բարոյական, ընկերային և նույնիսկ քաղաքական տագնապալի կացությանց լուծումը, և երաշխավորել հույսը աշխարհի խաղաղության:

Վեհափառ Հայրապետի գրական վաստակը, իր կոնդակները, իր հրապարակային արտահայտությունները դրոշմված են ոճի, իմաստի, շունչի և ոգիի գեղեցկությամբ:

Այս բոլորին, և հրատարակված գեղատիպ և մեր մշակույթը փութավորող հատորներուն, տպագրված Ավետարաններուն, «Էջմիածին» կրոնական ամսագրին, և տարեկան օրացույցներու հրատարակությանց համար, և ի տես աստվածապարզ և այդ բոլոր շնորհներուն, մեր հոգիին խորեն նորեն կմըմընջենք. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ»:

Եվ անկասկած որ, Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետի անունը պիտի նշվի Հայ Եկեղեցվո և հայ ազգի բազմերախտ և արդյունառատ զավակներուն և վաստակավորներու շարքին, և պիտի հավերժ մնա փառքի պատվանդանին վրա, որպես իր ժամանակի մարդը, որպես ամբողջական նվիրյալ հայր և հայրը՝ «Ծառայ Յիսուսի՝ Քրիստոսի ողորմութեամբն Աստուծոյ, և կամօքն ազգի՝ եպիսկոպոսապետ և կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Կաղոթենք որ հայ ժողովուրդի մաղթերգը միշտ հնչե, Կոմիտասյան հոգեմայլ դաշնավորումով, և արձագանքե ի սփյուռս ցրված, և ի Հայաստան հաստատված հայ հոգիներու մեջ. «Ամեն հայի սրտից բխած, լսիր այս ձայն, ով Աստված: Երկար կյանք տուր Հայրապետին, երկար օրեր Հայոց Հոր: Տեր անսասան պահիր դու միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռ»: Ամեն:

Ապա կատարվեց Հայրապետական մաղթանք, ուր բոլորը միաբերան աղոթեցին, որ Տերը անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և երկար կյանք պարզևի արդյունաշատ Գահակալին:

Հավարտ ս. պատարագի, որին ներկա էին Ամենապատիվ Պատրիարք Հայրը՝ ողջ եպիսկոպոսական դասով, Վրաց Ս. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը, Ս. Ֆիլարետ միտրոպոլիտն ու բոլոր թեմական պատգամավորները և հյուրերը, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով առաջնորդվեց Վեհարանի գահասրահ՝ ընդունելու հյուրերի և հավատացյալների աջահամբույրներն ու շնորհավորանքները:

Գահասրահում խոսք անավ Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք Ս. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը և ասաց.

Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Թեև մեր պաշտոնական և լրիվ խոսքը պետք է ըսենք վաղը, երեկոյան, երբ հանդիսավոր նիստ տեղի կունենա և ամենքս միասին հավաքված սիրո և եղբայրության սեղանի շուրջ՝ պաշտոնապես տոնախմբելու հաւար Ձերդ Սուրբ Օծույթյան գահակալության 30-ամյակը: Սակայն այս պահն այ կպարտադրեմ վմեզ, որպեսզի հոս երկու խոսք ըսենք այս առիթով: Երեսուն տարիներ առաջ, Վարագա Ս. Խաչի տոնին, Ձեր Վեհափառությունը օձվեցավ և նստավ Առաքելական Աթոռ՝ Սրբո Հորն մերո Գրիգորի Լուսավորչի հիմնած Աթոռի վրա: Այդ երեսուն տարիներու ընթացքին տեղի ունեցան մակընթացություններ և տեղատվություններ, այլեկոծություններ և խաղաղ, արևշատ սքանչելի օրեր: Այդ բոլորի մեջն Դուք, Վեհափառ Տեր, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո նավը ղեկավարեցիք իմաստուն ղեկավարի մը հեռատեսությամբ: Ըլլա խաղաղ օրերուն մեջ, ըլլա այլեկոծյալ, անհանդարտ օրերուն մեջ, Դուք ամուր կերպով բռնած Հայ Եկեղեցվո նավին ղեկը, առաջնորդեցիք պայն շարունակ խաղաղության, եղբայրության և սիրո նավահանգիստը: Այսօրվն կսկսի Ձեր Վեհափառության 31-րդ տարին, և ամենքս այ այս առիթով փառք կուտանք Աստուծո, գոհություն կմատուցանենք Աստուծո, որ շնորհեց Ձեզ մեզի այսքան երկար տարիներ, այնքան արդյունավորությամբ: Տարին չէ կարևորը, այլ այդ տարիներու ընթացքին տրված արդյունքը և Աստուծո անդաստանին մեջ մշակված և արտադրված հունձը: Դուք աշխատեցաք, Վեհափառ Տեր, ամեն մասամբ և ամեն մարպի մեջ, ըլլա նյութական, մտավորական և հոգևոր: Աշխատեցաք Դուք արդյունավոր դառնալ, և Ձեր արժանավոր և լավագույն դիրքերեն մեկը գրավել մեր Եկեղեցվո անչափ արժանավոր և մեծ Հայրապետներու շարքին: Մենք ուրեմն գոհություն կմատուցանենք Աստուծո, փառք կուտանք Աստուծո, որ իսկապես իր ձայնն էր, իր ներշնչումն էր, որով ամբողջ ազգը միաձայնությամբ զՁեզ կարգեց այդ Աթոռին և իր հույսերն ու ակնկալությունները, ուրախ և երջանիկ են ըսելու, որ արդյունավետությամբ պսակվեցան: Հետևաբար մենք հանուն ամբողջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, հանուն մեր հոգևորականության, հանուն մեր հավատացյալ ժողովուրդին այս առիթով սրտանց, հոգիով, ուրախությամբ և երջանկությամբ կողջունենք Ձեր Վեհափառությունը և կշնորհավորենք զՁեզ այս արդյունավոր հյուրասիրության առիթով: Եվ միաժամանակ կմաղթենք և կաղոթենք, որ Տերը տակավին ավելի երկար և նույնքան արդյունավոր տարիներ շնորհե՝ ի պայծառություն Ս. Եկեղեցիի, ի փառս ամենակալ Աստուծո: Ամեն:

Ի պատասխան Ամենապատիվ Պատրիարք Հոր, Վեհափառ Հայրապետն սասց.



ՎԵՎՈՒՄ ԿՆՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԳԱՎԱՍՐԱՆՈՒՄ

Ամեն բանից առաջ գոհություն եմ տալիս բարեխնամ Հորն Աստուծո, որ ինձ շնորհեց այս պահը, այսօրվան օրը: Երեսուն տարի հետո կրկին կանգնած եմ Ս. Գրիգոր Լուսավորչի գահի առջև ձեր բոլորիդ ներկայության, շրջապատված ձեզանով. սկսյալ Ամենապատիվ Սրբազան Մեր Եղբորից՝ Շնորհք Պատրիարք հայոց Թուրքիո: Ես նաև մասնավոր ուրախությունը ունեմ, որ այս արևոտ օրերին մեր մեջ է մեր դրացի ժողովրդի և Եկեղեցվո, Վրացական Օրթոդոքս Եկեղեցվո Հովվապետը՝ Նորին Սրբություն Իլիա կաթողիկոսը: Իլիա կաթողիկոսի ներկայությունը այստեղ խորհրդանշում է ոչ միայն ներկայությունը իր բարձր անձի, իբրև հովվապետ-կաթողիկոսը Վրաց Եկեղեցվո, այլ և խորհրդանշումն է ներկայությունը վրացական եզրայր ժողովրդի: Դարեր շարունակ մենք կողք-կողքի ենք ապրել: Վրացիք և հայեր, տակավին հնագույն ժամանակներից, գրեթե նույն օրերին քրիստոնեական կրոնքն են ընդունել և շատ հաճախ միասին կովել նույն թշնամիների դեմ՝ ի պաշտպանություն իրենց հայրենիքների: Ահա թե ինչու թանկ է մեզ համար Իլիա կաթողիկոսի ներկայությունը այստեղ:

Այստեղ է նաև, Մեր կողքին, Ռուս Պրավոսլավ մեծ Եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչ միտրոպոլիտ Ֆիլարետը, ներկայացուցիչը ռուսաց Պատրիարքի՝ Նորին Սրբություն Պիմենի, որը առողջական պատճառներով իսկապես չէր կարող այս երկար ճամփորդությունը կատարել և իր ամենաներկայացուցչական պատվիրակը, իր աջ բազուկներից մեկը՝ միտրոպոլիտ Ֆիլարետը ուղարկեց, որի համար Մենք շնորհակալ ենք: Կարծում եմ, ինքնին հասկանալի է, որ միտրոպոլիտ Ֆիլարետի, Ռուս Պրավոսլավ Եկեղեցվո ներկայացուցչի այստեղ գտնվելը Մեր կողքին, նույնպես խորհրդանշին է մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամության: Եվ հայտնի է ձեզ բոլորիդ, որ շուրջ երկու հարյուր տարիներից ի վեր մեր ժողովրդի փրկության ճանապարհը բացվել է այն օրերից, երբ հայ ժողովրդին իր ձեռքը երկարել է բարեկամ ռուս ժողովուրդը:

Մեր գոհունակությունն ենք հայտնում նաև, որ ներկա են և Մեզ շքուշապատում են այսօր Մեր սրբազան Եղբայրները, թեմակալ առաջնորդները՝ առանց բացառության: Այստեղ են նաև պաշտոնական ներկայացուցիչները տարբեր թեմերի և արտասահմանի համայնքների, ինչպես և մեր ներքին թեմերի:

Շնորհակալ եմ բոլորից և մաղթում եմ, որ Աստված մեզ շնորհի այսպիսի ուրախ օրեր, որպեսզի մեկտեղված՝ մենք հայաստանցիներս և դուք՝ արտասահմանից եկած հոգևոր Եղբայրներ և ազգի ներկայացուցիչներ, մեկ սիրտ, մեկ հոգի գործենք, մեր հին վերքերը դարմանենք և շինարար աշխատանքի լծվենք վասն առավել ամրապնդման և պայծառության մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, որ 1700 տարիներից ի վեր ողնաշարն է կապում հայ ազգի: Ժամանակները, ճիշտ է, փոխվել են, կացությունները հեղաշրջվել, ուրիշ աշխարհի մեջ ենք ապրում այսօր, քան մեր նախնիք 1000 կամ 1500 տարի առաջ, բայց պարմանալի կերպով Հայաստանյայց Եկեղեցին եղել է և մնացել 1700 տարիներից ի վեր միակ իրապես հայկական ազգային հավիտենական հաստատությունը, որ մեկ և անբաժան է պահում մեր ամբողջ ժողովուրդը ի սփյուռս աշխարհի:

Այս հավատքով և այս ուխտով ողջունում եմ ձեզ բոլորիդ և հայտնում եմ ամենքիդ աստվածային կենարար օրհնությունը այժմ և միշտ. ամեն:

Ապա ներկաները մեկ առ մեկ մոտեցան ի համբույր Նորին Սրբության



Աղբյուր-հուշարձան Վեհարանի առջև Մայր Աթոռի բարերար Արծրուն Ջրբաշյանի հիշատակին

Աջին՝ իրենց հետ տանելով սուրբ պատարագի խորհուրդն ու Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությունները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Սեպտեմբերի 29-ի երեկոյան Երևանի «Հրապրան» հյուսանոցի շքեղ ւրահում պաշտոնական ճաշկերույթ տրվեց ի պատիվ հայ և օտար հոգևորականների և պատգամավորների:

Ճաշկերույթին ներկա էին Կ. Պոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը իր շքախմբով, Տ. Ֆիլարետ միտրոպոլիտը իր շքախմբով, թեմակալ առաջնորդներն ու թեմական վարչական մարմինների ներկայացուցիչներ:


Բավամարդ ճաշկերույթին ներկա էին նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Միխայլովիչ Խարչևը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիարք Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Չարգարյանը, այլ պաշտոնական անձինք, արվեստի գործիչներ և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթի սկզբում Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց բոլորին և շնորհակալություն հայտնեց մասնակցության համար: Բաժակաճառով հանդես եկավ Ամենապատիվ Շնորհք Պատրիարքը և խոսեց այն հրակայական վերելքի մասին, որ Վեհափառ Հայրապետի ջանքերով արձանագրել է Ս. Էջմիածինը, այն մասին, որ Վեհափառ Հայրապետի գլխավոր նվաճումներից մեկը եղավ ամբողջ հայությունը և հատկապես սփյուռքը կապել հայ հոգևոր կենտրոնին: Ապա Ամենապատիվ Պատրիարքը բաժակ բարձրացրեց և ասաց. «Վեհափառ Տեր, այս երջանիկ առիթով ամենքս ալ բարձրացնենք մեր բաժակները, հոգիով լեցնենք և խմենք Ձեր թանկագին կենացը: Փառք տանք Աստուծո, որ ավելի երկար տարիներ շնորհե Ձերդ Սրբությանը»:

Ապա հավուր պատշաճի կենաց խոսքերով հանդես եկան՝ Ռուսինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Չավեն արքեպ. Չինչինյանը, Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը, Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը, Լիբանանահայ հյուսարակական գործիչ պրոֆ. Բարունակ Թովմասյանը, Լոնդոնի հայկական համայնքի եկեղեցու խորհրդի ատենադպիր տիար Հակոբ Փալամուտյանը, Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու խնամակալ մարմնի նախագահ տիար Գևորգ Քյուրքչյանը, Միացյալ Նահանգների արևմտյան թեմի թեմական խորհրդի ատենապետ տիար Ռոբերտ Պարսամը, Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի գանձապահ տիար Սարգիս Պետկյանը, Բրավիլիայի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամ տիար Չավեն Գալպաճյանը և Արգենտինայի հայ եկեղեցու կենտրոնական վարչության անդամ տիար Սամվել Բոսոնյանը՝ բերելով իրենց գաղութների հայության սրտի ջերմ խոսքը ի շնորհավորումն Վեհափառ Հայրապետի երեսնամյա գահակալության:

Ապա Վեհափառ Գահակալը հանդիսավոր պայմաններում Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշաններով պարգևատրեց Մայր Աթոռի բարերարներ՝ տիկին Վիոլետա Արսլանյանին (Բելգիա) և տիկին Մարի Մնդիկյան-Հյուսիսայանին:

Բաժակաճառերը հաճախ ընդմիջվում էին հայ դասական երաժշտության գեղեցիկ կատարումներով:



ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
S. S. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

Բնական է, որ բոլոր հանդիսությունների կիսակետը եղավ հոբեյանական հանդիսավոր նիստը, որ տեղի ունեցավ 1985 թվականի սեպտեմբերի 30-ի երեկոյան, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, ի ներկայության պետական և եկեղեցական բարձրաստիճան անձանց և ժողովրդի հոծ բազմության:

Հանդիսավոր նիստը բացեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ S. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը.

«Վեհափառ Տեր,

Չերդ Սրբություն, Իլիա Բ կաթողիկոս Վրաց,

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Կոստանդնուպոլսո,

Մեծահարգ պետական ներկայացուցիչներ,

Սրբազան հայրեր, հարգելի հյուրեր և սիրելի հանդիսականներ,

Այսօր, Վեհարանի այս ջբեղ հանդիսասարահին մեջ հավաքված են Հայաստանյայց Եկեղեցվո թեմակալ առաջնորդներ և պատգամաւորներ, Մայր Աթոռո միաբանություն և պաշտոնեություն, սիրելի հյուրեր և ժողովուրդ հայոց՝ տոնախմբելու Նորին Սուրբ Օծություն Վազգեն Վեհափառ Հայրապետի օծման և գահակալության երեսունամյա հոբեյանը: Բարեբախտ և երջանիկ է Հայ Եկեղեցին և հավատացյալ հայ ժողովուրդը, որ երեսուն տարիներ Լուսավորչի գահուն վրա արժանավորապես բազմեցավ Վազգեն Վեհափառ Հայրապետը և Աստուծո առաջնորդությամբ և իմաստությամբ հովվեց Հայաստանյայց Եկեղեցին և ժողովուրդը: Նորին Սուրբ Օծությունն իր գահակալության սկիզբը այցելեց արտասահմանի հայ եկեղեցիներն ու թեմերը՝ անոնց տանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լույսը, հավատքը և օրհնությունները: Եվ արտասահմանի հայ ժողովուրդը արևածաղկին պես իր դեմքը դարձուց դեպի Ս. Էջմիածին, անկե հոգևոր սիրո և հայրենասիրության սնունդ ստանալու համար: Նորին Սուրբ Օծությունը այցելեց բոլոր քրիստոնյա եկեղեցիներու պետերուն և անոնց տվավ Հայ Եկեղեցվո պատգամը, Հայ Եկեղեցվո սերը և ողջույնները: Եվ անոնք Վեհափառ Հայրապետի լուսաշող և ճառագայթող դեմքին վրան տեսան հայ ժողովուրդը, Հայ Եկեղեցին և հայ ազգը: Ու եկան Հայոց աշխարհը՝ տեսնելու Ս. Էջմիածինը բարեպարոյ և վարթոնքի մեջ: Տեսան Հայոց վերածնված և ծաղկյալ աշխարհը:

Վեհափառ Հայրապետ իբրև հովվապետ հայ հավատացյալ ժողովրդի և իբրև դաստիարակ՝ գուրգուրանքով խնամք տարավ հոգևոր ճեմարանին և պատրաստեց Հայ Եկեղեցվո ներկա նոր սերունդը, որոնց մեծ մասը իր հոգևոր զավակները, սաներն ու աշակերտներն են:

Նորին Սուրբ Օծությունը այսպես Հայ Եկեղեցին ճանչցուց օտար աշ-

խարհի մյուս Եկեղեցիներուն և հայ ժողովուրդը կապեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հայրենի աշխարհին:

Վեհափառ Տեր, այսօր եկած են հայ ժողովուրդի ներկայացուցիչներ, թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, և թանկագին հյուրեր և պաշտոնական անձնավորություններ՝ շնորհավորելու Ձերդ Սրբության երեսնամյա երջանիկ հոբելյանը:

Եվ աղոթենք առ բարին Աստված, որ Ձերդ Սրբությանը պարզեց երկար, արևշատ և պտղալից տարիներ, որպեսզի հովվեք հայ հավատացյալ ժողովուրդը՝ ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, ի մխիթարություն հայ ժողովրդին և ի փառս ամենակալին Աստուծո:

Ինձի համար բացառիկ հաճույք և պատիվ է Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմանե Վեհափառ Հայրապետին մատուցելու այս աղափանդակուռ պնդուխտյա հայրապետական մատանին՝ իբրև նշան մեր սիրո և հարգանքի»:

Ապա օրվա հանդիսավար, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոպապայանը ամբիոն հրավիրեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ կարդալու իր օրվա խոսքը և իր պատգամը հաղորդելու հայ ժողովրդին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Լուսովդ քով Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք»:

Իմ աչքերը ես լույսին բացեցի 1908 թվի սեպտեմբերի 20-ին, Բուխարեստում, որ ռումիներեն նշանակում է «ուրախությունների քաղաք»: Երեսունհինգ տարիներ անց, Ակրոպոլի ստորոտում մի խղճուկ հայ աղոթքի տան մեջ իմ հոգին բացեցի մի այլ լույսի դիմաց, որի ճանապարհով փորձեցի գտնել աղբյուրը անծանոթ լույսի: Եվ Աստուծոն փնտրելու ճանապարհին ես գտա Սուրբ Էջմիածինը և իմ Մայր Հայրենիքը, ու խոնարհվեցի ճակատագրի առաջ, դառնալով առաջին սպասավորը մեր լուսաբնակ հայրերի Եկեղեցու:

Այդ օրվանից անցել են երեսուն տարիներ: Երեսուն տարիներ երապանքների ու մտահոգությունների, երեսուն տարիներ հուսախաբությունների ու որոնումների, երեսուն տարիներ լարված աշխատանքի, երեսուն տարիներ իրագործումների: Այդ մասին չէ որ պետք է ես խոսեմ: Այլ միայն պարտավոր եմ գոհություն հայտնել Աստուծոն, որ այդ երեսուն տարիների հոգևոր ու նյութական շինարար իրագործումները կապվեցին իմ անվան հետ: Ես ինձ նկատում եմ բախտավոր հայրապետ: Ես աշխատել եմ, ինքս ինձ հավատարիմ մնալով հանդերձ, գործել ոչ ինչպես ես եմ կամեցել, այլ ինչպես թելադրել է իմ պարտքի գիտակցությունը. ու միշտ երկյուղ եմ կրել իմ սրտում, թե չլինի շեղվեմ իմ կոչման ճամփից: Միշտ իմ վրա ծանր է ճնշել պատասխանատվության վզացումը: Սկզբունքային հարցերի առաջ գտնվելիս ես ինձ հարց եմ տվել, թե տվյալ դեպքում ինչպե՞ս պիտի վերաբերվեին ինձ նախորդող հայրապետները և փորձել եմ խորհել ու գործել 129 հայրապետների հետ միասին:

Թե այս երեսուն տարիների ընթացքում կատարված ամեն մի իրագործում ինչքան ուրախություն, ինչքան մխիթարություն, ինչքան լուռ կարտություն են պարզել իմ հոգուն, դժվար թե դուք կարողանաք պատկերացնել:

Իմ ընտրությունից մի շաբաթ անց, մի երեկո ես մենակ խնկում էի Հին Վեհարանի դահլիճում: Լուսամուտները բաց էին: Ներքևում, դուրսը նստած պրուցում էին մի քանի ծերունի ծառայողներ: Հանկարծ լսեցի վանեցի Գրիգոր շաթիրի ձայնը՝ «Փառք Աստուծո, Վեհարանի լույսերը վառվեցին»:

Իմ ուրախության առաջին ցնցումը ապրեցի ես այդ պահին: Եվ այսպես, ամեն օր, ամեն ամիս, տարիներ շարունակ մինչև այսօր, իմ շուրջը լույսեր վառվեցին:

Հետզհետե լուսավորվեցին մեր հնադարյան աղոթքի և ուխտի բազում տաճարներ, սկսած Մայր տաճարից, կոթողներ հայ դասական ճարտարապետական հանձարի:

Մայրենի լեզու ու հայ դասական ճարտարապետություն. ահա, իմ կարծիքով, հարապատագույն և մնայուն անկորնչելի ազգային արժեքները հայ ոգեկանության:

Իմ գահակալության երեսուն տարիներին հիմնովին վերանորոգվեցին ու նոր կյանքի կոչվեցին այդ ոգեկանության արգասիքը հանդիսացող տասնյակ միջնադարյան անվանի հուշարձաններ, որոնք բոլորը այսօր գործող վանքեր ու եկեղեցիներ են, լույս և մխիթարություն բաշխող մեր երկրի ու արտասահմանցի հայ հավատացյալներին:

Այդ հոգևոր լույսը հետզհետե թափանցեց Հայաստանի խոնարհ ժողովրդի լայն զանգվածների սրտերում: Ավելի մխիթարվեցին, ավելի պայծառացան հուսացյալ հոգիները հայրենաբնակ մեր բարեպաշտ ժողովրդի: Ես վկան եմ այդ հոգևոր վարթոնքի: Այսօր, Սուրբ Էջմիածինը հայրենի հավատավոր ժողովրդի բաբախող սիրտն է հանդիպանում:

Նոր լույսեր վառվեցին հոգևոր ճեմարանից ներս և հետզհետե եասնող երիտասարդ միաբանների սրտերում: Այսօր մեր ներքին թեմերում սպասավորող ավելի քան հարյուր հոգևորականներ, բոլորը նոր սերնդին են պատկանում, շրջանավարտներ հոգևոր ճեմարանի: Նրանք հավատավոր, բանիմաց և նվիրյալ սպասավորներն են մեր Եկեղեցու: Թեև ունեցա նաև հուսախաբություններ, սկսած Մայր Աթոռից մինչև արտասահման:

Իմ երպանքն է եղել և այսօր էլ է, որ Մայր Աթոռում թե մեր բոլոր թեմերում գործող հայ հոգևոր սպասավորը, լինի եպիսկոպոս, վարդապետ կամ քահանա, մնա հավատարիմ իր սուրբ կոչման, որպես ծառա Աստուծո ու ժողովրդի, հավատքով աներեք, բարոյական նկարագրով գոտեպինդ, և անձանձրույթ աշխատող, իբրև ժիր մատուցակ, ի շինություն իր ժողովրդի հոգեվոր կյանքի, իր անձնական վարքով բարի օրինակ դառնալով հավատացյալներին: Իմ հորդորն է եղել մանավանդ, որ հայ հոգևորականը իր արժանավորությունը չխաթարի՝ արծաթսիրության, մեծամտության, անկարգապահության և այլ տկարություններով: Հայ Եկեղեցու ոչ մի սպասավոր թող գայթակղության մեջ չընկնի՝ խորհելով թե, եթե խելք ունի, կարիք չունի հոգեբարոյական մի հրամայականի անսալու:

Մայր Աթոռից լույս են սփռում նաև այն չորս թանգարանները, ուր հավաքված և ցուցադրված են ավելի քան երեք հազար մասունքներ, պատմական և գեղարվեստական արժեք ներկայացնող հայ եկեղեցական արվեստի գործեր:

Մայր Աթոռը լույսի կենտրոն դարձավ նաև իր հրատարակություններով ու տպարանով: Բացի մեր ամսագրից, լույս տեսան բազմաթիվ հատորներ և շքեղ ալբոմներ, նաև երեք անգամ տպվեց ու Հայաստանում տարածվեց Նոր Կտակարանը արևելահայ գրական լեզվով: Եվ շուտով լույս պիտի տեսնի Աստվածաշունչ մասյանը ամբողջությամբ, որի վրա արդեն երեք տարի է աշխատում են հայրենի տասը գրաբարագետ գիտնականներ:

Մասնավոր գնահատանքով պարտք եմ զգում հիշատակելու, որ տարիների շանքերով ենարավոր դարձավ ի հայտ բերելու և վերանորոգչական մասնագիտական աշխատանքներով վերջնական կորստից փրկելու հայ եկե-

ղեցական նկարչության բազմաթիվ գործեր, մեծ մասամբ Հովնաթանյանների դպրոցի ստեղծագործություններ, որոնցով պարզարված են այսօր մեր Մայր տաճարը և Ս. Էջմիածնի թանգարանները: Հնադարյան հայ եկեղեցական արվեստի գործերի վրա ավելացան նաև մեր օրերի հայրենի արվեստագետների գործերը՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», «Հայ տառերի գյուտը» և «Ավարայրի ճակատամարտը» պատկերող մեծածավալ պատի գորգերը (գոբելենները)՝ գործ տաղանդաշատ նկարիչ Գրիգոր Խանյանի: Իսկ հայրենի արվեստագետներ՝ ճարտ. Բաղդասար Արզումանյանին և ոսկերիչ Ժիրայր Չուլոյանին ենք պարտական արվեստի ոսկեձուլ գործերը՝ «Հայկական այբուբեն»-ը, «Հայկական խաչ»-ը և «Հայաստանի գերբ»-ը, որոնք պարզարում են Նոր Վեհարանը:

Նաև երաժշտության բնագավառում նոր նվաճում ենք համարում մեր պատվերով կատարված երաժշտական գործերը՝ մեծատաղանդ երգահան Ալեքսանդր Հարությունյանի դաշնավորած «Գթա, Տեր»-ը, Օհան Դուրյանի «Քրիստոս յարեալ ի մեռելոց»-ը և Խորեն Մեյխանեճյանի հորինած պատարագի նոր երգեցողությունը, որը կոչեցինք «Խորենյան» պատարագ:

Երեսուն տարիներ շարունակ իմ տեղական մտահոգություններից մեկն է եղել, որ նոր կառուցվող մեր աղոթքի Տները արտասահմանում հնարավոր չափով ունենան հայկական դասական ճարտարապետության ոճ, սրբանկարները ներշնչված լինեն միջնադարյան հայ մանրանկարչությունից, եկեղեցական երաժշտությունը ձեռքավորվի ոչ-հայկական, արևելյան ժեքծեքումներից ու առաջնորդվի մեծն Կոմիտաս վարդապետի երգեցողության շնչով:

Հայերեն լեզուն, հայկական ճարտարապետությունը, հայկական խաչքարերը, հայկական սրբանկարչությունը և երաժշտությունը կապում են մի ոճային ամբողջություն և ստեղծում մի հոգևոր ուրույն մթնոլորտ մեր աղոթքի Տներից ներս: Այդ մթնոլորտում է, որ Սուրբ Հոգին խոսում է հայ աղոթողի սրտին: Հայ Եկեղեցու կամարների ներքո՝ աղոթքը, երգը, նկարչությունն ու ճարտարապետությունը թող համանվազ հայերեն հնչեն:

Անցնող երեք տասնամյակներին իմ սեպուխ պարտականությունն էմ համարել հայրապետական հատուկ կոնդակներով ոգեկոչել պանծալի հիշատակը մեր Եկեղեցու մեծանուն ղեմքերի և ազգային պատմական կարևոր տարեթվերի, ի լուսավորումն և ի շինություն մեր ժողովրդի զավակների հոգևոր ու ազգային գիտակցության: Այստեղ կարծում եմ հարմար է և արժան առանձնապես արձանագրել, որ 1965 թվին, Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի առթիվ, հայրապետական կոնդակով ոգեկոչեցի մեր բյուրավոր նահատակների սուրբ հիշատակը և Հայաստանի տարածքի վրա առաջին անգամ լինելով բարձրացավ Ապրիլյան Նահատակաց հուշարձան Սուրբ Էջմիածնում, Մայր տաճարի կողքին, և ապա, նույնպես առաջին անգամ լինելով, Սարդարապատի հերոսամարտի հաղթանակը շեփորվեց Ս. Էջմիածնի բարձունքից 3 սեպտեմբեր 1972 թվակիր հայրապետական կոնդակով:

Եվ վերջապես, կարծում եմ արդար է հիշատակել Մայր Աթոռի տնտեսական և շինարարական իրագործումները, որ ես գնահատում եմ նույնպես իբրև լուսավոր: Այսօր Մայր Աթոռը բավականին մեծ մի վանական և վարչատնտեսական ու շինարարական ինքնավար կազմակերպություն է՝ երեսուներեք միաբաններով, 230 մնայուն պաշտոնյաներով, շինարար մասնագետներով, վարպետներով և բանվորներով, Մայր Աթոռի ուղղակի ենթակա վեց վանքերի քառաձայն երգչախմբերով, չհաշված բնականաբար Արարատյան և Շիրակի թեմերի եկեղեցիների հոգևոր դասը, պաշտոնեությունը և երգչախմբերը: Հայաստանում և մեր ներքին թեմերում գործող բոլոր վանքերում

ու եկեղեցիներում մատուցվում են պատարագի արարողություններ անխափան ամեն կիրակի, միշտ երգչախմբերի մասնակցությամբ:

Սուրբ Էջմիածինը նյութապես էլ բարվոք վիճակում է գտնվում, Երևանի դրամատան մեջ առ այսօր ունենալով պահեստի կարևոր մի գումար, ներքին եկամուտներից գոյացած, իսկ Ժնևի «Ունիոն դը բանկ Սուիսում»՝ նույնպես կարևոր մի գումար անձեռնմխելի, որի տոկոսներից է օգտվում Մայր Աթոռ, արտասահմանից գնումներ կատարելով իր ներքին կարիքների համար: Այս տարվա Մայր Աթոռիս նախատեսված բյուջեն է՝ 1.900.000 ռուբլի: Ներքին թեմերը անշուշտ ունեն իրենց սեփական բյուջեները՝ ներքին եկամուտներից գոյացած, որից որոշ տոկոս, տեղական ծախսերը փակելուց հետո, փոխանցում են Սուրբ Էջմիածին իբրև աթոռատուրք:

Այս լուսավոր իրագործումները պարտական ենք նախ այն օրինական և գործնական հույժ նպաստավոր պայմաններին, որոնք ստեղծված են մեր երկրում՝ Եկեղեցու և Ս. Էջմիածնի օգտին, մեր հայրենի պետության հոգատարությամբ:

Երկրորդ՝ մեր հայրենաբնակ ու արտասահմանում ապրող հավատացյալ ժողովրդի առատաձեռն նվիրաբերումներին: Խորապագ հույզմով պարտավոր եմ արձանագրել այստեղ իմ երախտագիտությունը այն բազմաթիվ նվիրատուներին, որոնք այնքան արտաբուխ սիրով իրենց հոգու պարզը մատուցեցին ի պայծառություն Սուրբ Էջմիածնի և հայրենի մեծահոշակ վանքերի ու եկեղեցիների և հիրագործումն Մայր Աթոռիս կրոնական, կրթական, շինարարական ծրագրերի: Մայր Աթոռիս 94 կարևոր նվիրատուների անունները՝ գլխավորությամբ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության և ազգային բարերար Ալեք Մանուկյանի, քաղաքակրթական և Վեհարանի մարմարյա պատվո տախտակի վրա, ի հիշատակ հետագա սերունդների:

Երրորդ՝ մեր հոգևորական և աշխարհական գործակիցներին, հատկապես Գերագույն Հոգևոր Խորհրդին և Վերստուգիչ Հանձնաժողովին, ներքին մեր թեմերի թեմակալ սրբապան առաջնորդներին, Մայր Աթոռիս վարչության բաժինների վարիչներին, մեր մասնագետ հմուտ ձարտարապետների Հանձնաժողովին, հոգևոր ձեմարանիս բարեխիղճ դասախոսներին և բազմաթիվ հայրենաբնակ գիտնականներին ու մտավորականներին, որոնք ամեն առթիվ սիրով իրենց նպաստը մատուցեցին Մայր Աթոռիս ծրագրերի իրագործման ի խնդիր:

Այսօր, երախտաշատ սրտով և օրհնությամբ պարտք եմ հաւարում իմ շնորհակալությունը հայտնել բոլորին, բոլորին անխտիր:

Այս երեսուն տարիների շրջանում նոր թափ ստացան նաև հարաբերություններն ու գործակցությունը Ս. Էջմիածնի և սփյուռքի մեր եկեղեցական կենտրոնների միջև: Կատարվեցին 22 հայրապետական այցելություններ դեպի ներքին թեմերը, 27 այցելություններ արտասահմանի մեր թեմերը և քույր եկեղեցիների կենտրոնները: Այդ բոլորը օրը օրին մանրամասնորեն արձագանք են գտել մեր «Էջմիածին» պաշտոնաթերթի և հայրապետական ուղևորությանց նվիրված հատորների մեջ: Կարծում եմ, սա ևս մի լուսավոր էջ է՝ Մայր Աթոռ—սփյուռք հարաբերությունների տարեգրության մեջ մեր ժամանակաշրջանում:

Կարևորությամբ պարտավոր եմ արձանագրել, թե Մայր Աթոռիս ավանդական հարաբերությունները միշտ բնականոն ընթացքի մեջ են գտնվել մեր նվիրապետական Աթոռների՝ Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պատրիարքությանց հետ, եկեղեցաշեն գործակցության պայմաններում: Հարկ եմ համարում ընդգծել, թե մինչև օրս Ամենայն Հայոց Հայրապետը իր մշտական

հոգածության առարկան է դարձրել մեր Եկեղեցու այս երկու պատմական Աթոռների հոգևոր ու միջազգային հեղինակության պահպանումը և ամրապնդումը:

Մայր Աթոռս իր կանոնական կապերը պահպանել ու հետզհետե ավելի է ամրապնդել արտասահմանի մեր բոլոր թեմական կենտրոնների հետ, ի մխիթարություն մեր հավատացյալ պանդուխտ ժողովրդի: Այդ ճանապարհին, թեմերի առաջնորդ սրբազան եպիսկոպոսները և առհասարակ սփյուռքահայ ուխտապահ հոգևոր դասը միշտ կանգնած են եղել հոգևոր ծառայության բարձունքի վրա, միշտ հավատարիմ իրենց կրոնա-դաստիարակչական առաքելության, միշտ հավատարիմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Բոլորին հայտնում եմ իմ հայրական սերն ու գնահատանքը և շնորհակալությունը:

Ավաղ, սակայն, նույնը չեմ կարող ասել Անթիլիասի Կիլիկյան Աթոռի մասին, որի գործելու ուղղությունը որոշ սովեր գցեց մեր Եկեղեցու կյանքի վերջին երեսուն տարիների վրա, 1957 թվականից սկսած, երբ ոչ-եկեղեցական նպատակներով առաջնորդված, նա որդեգրեց Ս. Էջմիածնին հակադրվելու բացորոշ քաղաքականություն՝ Էջմիածնի Հայաստանի համար, Անթիլիասը արտասահմանի համար կարգախոսով: Ճակատագրական մի սխալ գործվեց Անթիլիասի ափերին:

Վետևանքները վնասաբեր եղան մեր Եկեղեցու և ազգի համար, ու պիտի դառնան հետզհետե առավել աղետալի, եթե կատարված սխալը չուղղվի, և չվերականգնվի մեր Մայր Եկեղեցու կանոնական միությունը և մեր հավատավոր ժողովրդի ազգային միասնությունը, այնպես, ինչպես կար ու գոյատևում էր այդ ցանկալի իրավիճակը մինչև 1957 թվականը:

Մայր Աթոռիս համար սփյուռքի մեր եկեղեցիների հետ սերտ գործակցությունը ոչ միայն կրոնական, եկեղեցա-կանոնական նշանակություն ունի, այլ նաև՝ ազգային-հայրենասիրական: Այսօր, արտասահմանում բնակվող հայերի ամենանվիրական առաքելությունը՝ հայապահպանումը, պայմանավորված է մանավանդ Մայր Հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացմամբ և ծավալմամբ, մշակութային գեանի վրա: Հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդումը կարևոր չափով պայմանավորված է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի եղբայրական հարաբերությունների ու գործակցության ամրապնդումով: Ինչպես միշտ, այսօր էլ ես այդ նկատում եմ կենսականորեն անհրաժեշտ ու հնարավոր: Եվ այս հանդիսավար առիթով կրկնում եմ իմ 7 հունիս 1985 թվակիր հրավերը Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռին, որով առաջարկում եմ շարունակել մեր բանակցությունները լիազորված ներկայացուցիչներով, այս անգամ կարևոր մի առաջադրանքով, որ համատեղ աշխատանքով փորձենք արմատապես բուժել մեր առաջ ծանացող և տագնապ հարուցող կացությունները, պատրաստելով մի կանոնադրության նախագիծ, որ կոչված լինի հստակելու և կանոնավորելու Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների և թեմական կենտրոնների փոխհարաբերություններն ու իրավասությանց սահմանները Հայաստանից Եկեղեցու կազմակերպության կառույցի մեջ, կանոնական սկզբունքների և արդի իրադրությանց լույսի ներքև:

Արտասահմանի հայությունը, մոտ կեսը մեր ժողովրդի, թանկ է ամեն մի հայրենաբնակ հայի համար: Հայաստանցի հայը չի կարող իրաժարվել օտար ճանապարհների վրա, օտար ազդեցությունների տակ ապրող իր եղբայրներից ու քույրերից: Սուրբ Էջմիածնի չի կարող իրաժարվել արտասահմանում գործող իր եկեղեցական կենտրոններից և հայ հավատացյալներից, որոնք բոլորը մեկ մարմին են կազմում Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլ-

քով, Փրկչի Իջման տեղով և Ամենայն Հայոց Հայրապետական Մայր Աթոռով: Միայն Սուրբ Էջմիածնով հնարավոր է պահել ու ամրապնդել կանոնական միությունը մեր առաքելական Մայր Եկեղեցու և ազգային միասնությունը համայն հայ ժողովրդի: Բաժանվել Սուրբ Էջմիածնից, հայ մարդու համար նշանակում է բաժանվել իր ինքնությունից: Երբեք չմոռանանք Առաքել Դավրիժեցու մարգարեաշունչ խոսքերը. «Ի վերայ Աջոյն և Սուրբ Էջմիածնի ամենայն ազգքն հայոց կապեալ կան»: Ով այլ կերպ է մտածում ու գործում եկեղեցական թե ազգային տեսակետից, պետք է նրան հորդոր կարգալ, որ վերադառնա հայոց պատմության ուղիղ ճանապարհի վրա:

Ես լուսավոր եմ նկատում նաև Մայր Աթոռիս եղբայրական սիրո ու գործակցության կապերը մեր քույր Եկեղեցիների հետ, արդիական էկումենիկ ոգով:

Երջանիկ եմ հաստատելու, որ անցնող երեսուն տարիներին Մայր Աթոռիս հարաբերությունները քույր Եկեղեցիների և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հետ հետպիտե դարձան ավելի սերտ ու պտղառատ, փոխադարձ բազում այցելություններով, միատեղ աղոթքներով, խորհրդակցություններով և ժողովներով:

Մեր Եկեղեցու համար պատմական նշանակություն ունեցած մանավանդ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիպումները՝ Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքի, Հռոմի Սրբազան Քահանայապետի, Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքների: և Քենթրբերիի Անգլիկան Արքեպիսկոպոսների հետ, հույժ հանդիսավոր պայմաններում:

Քրիստոսի անունով գործող Եկեղեցիների էկումենիկ միության շարժումը մեր ժամանակների ամենանշանակալի երևույթներից մեկն է հանդիսանում, որին գործոն կերպով մասնակցում է մեր Մայր Եկեղեցին: Մայր Աթոռս, հետ այսու ևս, շարունակելու է իր մասնակցությունը բերել այս շատվածա-հաճո շարժանը, այն համոզմամբ, որ քրիստոնյա Եկեղեցիները Քրիստոսի սիրով միացած, պիտի կարողանան նաև իրենց նպաստը մատուցել մեր օրերի մարդկությանը հուզող հարցերի լուծմանը՝ Քրիստոսի Ավետարանի մարդասիրության, արդարության և խաղաղության պատգամները ունենալով իբրև առաջնորդող ուժ:

Եկեղեցիների միության հարցը ես ըմբռնում եմ, ինչպես ընդունված է ասել, պլուրալիստ իմաստով: Ինձ համար Եկեղեցիների միության հարցը միայն դավանաբանական տեսական հարց չէ, այլ նաև՝ եկեղեցական ինքնիշխանության հարց և ազգային ինքնության պահպանման հարց: Բոլոր Եկեղեցիների միությունը իրականանում է Քրիստոսով, բոլոր քրիստոնյաները կապմուն են միասին Աստուծո ժողովուրդ: Ուղիղ չէ և ոչ էլ ավետարանական՝ այլևայլ տվյալներով կամ մեկնաբանություններով պայմանավորել այս պարզ ճշմարտությունները և անձնատուր լինել անպտուղ վեճերի:

Մենք՝ հայերս, Քրիստոսին ճանաչում ենք մեր Եկեղեցու պատմությամբ, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզության ավանդությամբ, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Գրքի թարգմանությամբ, «Վարդանանց» նահատակությամբ և անթիվ-անհամար մարտիրոսներով, այսինքն՝ մեր հաղթական Եկեղեցիով:

Հայ Եկեղեցին իր ժողովրդով մեկ ու անբաժան է, ինքնազուլս ու ինքնիշխան: Ու այդպիսով, նա համաքրիստոնեական եղբայրության, Աստուծո ժողովրդի հարապատ մեկ հատվածն է: Առանց այդ ինքնուրույնության ու ինքնիշխանության, հայ ազգի հավատքը կխախտվի ու կխամրի: Հայոց քրիստոնեական հավատքի վավերականությունն ու վեհությունը, հմայքը խարըսխ-

ված են նրա Եկեղեցու ուղղափառության վրա, նրա Եկեղեցու հերոսական պատմության վրա, նրա Եկեղեցու ինքնիշխան ու ինքնագլուխ ղեկավարման վրա:

Ահա այն լույսերը, որոնք վառվեցին տակավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և մեր Եկեղեցական կյանքում ի Հայաստան և ի սփյուռու աշխարհի: Իմ ուխտս է Տիրոջ կամքով շարունակել առաջ ընթանալ նույն ճանապարհով, նոր լույսեր ավելացնելու համար մեր հոգևոր կյանքում:

Այստեղ ես մի պահ կանգ պետք է առնեմ՝ ծանրորեն մտախոզված: Աստված մի արասցե, որ Մայր Աթոռում ու Մայր Հայրենիքում վառված լույսերը խափանվեն, և նորանոր փորձությունների առջև գտնվեն մեր Եկեղեցին ու մեր մայր երկիրը: Այո, այդ աղետը կարող է պատահել, եթե պատերազմ կոչվող մահ ու ավեր սփռող հրեշը մոտենա մեր վերաշինված պերճ հայրենիքի ավերին: Թերևս աշխարհի վրա չկա մի այլ ժողովուրդ, որի գոյությունը այնքան վտանգված լինի համաշխարհային մի նոր պատերազմի բռնկումով: Մեկ ներելի չէ մոռացության տալ անցյալի մեր աղետալի փորձառությունները: Մեկ ներելի չէ չտեսնել մեր երկրի աշխարհագրական դիրքն ու բաղաբանական պայմանավորումները: Աշխարհը և միջազգային իրադարձությունները ես դիտում եմ կանգնած իմ Մայր Հայրենիքի հողի վրա աներեր, մեր ժողովրդի ապագա ճակատագրի մտախոզությամբ: Այո, չմոռանանք անցյալը, մեր վերջին հարյուր և հիսուն տարիների ողբերգական փորձառությունները: Չմոռանանք, որ մեր ներկան, արդի մեր վերածնված ու վերաշինված Հայաստանը, ափսեի վրա մեզ մատուցված պարգև չէ, այլ արգասիքն է հայ ազատագրական հերոսական մաքառումների, արգասիքն է Սարդարապատի մայիսյան հաղթանակի ու ապա նոյեմբերյան լուսաբացի և վերջին 65 տարիների վիթխարի շինարարական իրագործումների և ազգային մշակույթի ծաղկումի:

Հայ հոգևորականը իր ժողովրդի զավակների հետ, դաժան ժամանակների հարվածների տակ, արտասուքը աչքերին դարեր շարունակ հարց է ավել Աստծուն, թե ե՞րբ կբացվի Հայոց աշխարհում պայծառ առավուրդ խաղաղության:

Մարդու իրավունքների հարց, այո: Ես հրամայական եմ նկատում նախ հայի իրավունքը՝ իր հայրենի հողի վրա անվտանգ ու խաղաղ ապրելու, հայի իրավունքը՝ գոյատևելու և անկաշկանդ զարգացնելու իր տնտեսությունն ու ազգային մշակույթը:

Մայր Հայրենիքի անվտանգությունը վեր է ամեն գաղափարախոսական նախասիրությունից, բոլոր կուսակցական նկատումներից:

Երբ հարցը վերաբերում է հայ հայրենիքին, սփյուռքահայը պարտավոր առաջնահերթ հրամայական նկատել իր մայր երկրի անվտանգությունն ու գոյատևումը, անկախ իր գաղափարախոսական համոզմունքներից:

Հայ դատը հետապնդելու ամեն իրավ ճանապարհ սկիզբ է առնում արդի Հայաստանի անվտանգության ապահովումով: Ով արդի մեր հայրենի պետության մեջ չի տեսնում հավերժական Հայաստանը, նա հեռավեպես անընդունակ կդառնա որևէ իրական Հայաստան տեսնելու:

Եվ որպեսզի իմ միտքը ամբողջացնեմ, հայտնեմ իմ մաղթանքը, որ Վոլգայի ավերին, ինչպես 40 տարի առաջ, թող միշտ ու տևապես ռուսական հաղթանակ լինի, որպեսզի Արարատի փեշերին, հայերը ամեն առավուր խաղաղ սրտով իրար ողջունեն «բարի լույս--ով»:

Այս է իմ համոզումով, հիմնական նախադրյալը մեր մայր երկրի ու ժողովրդի գոյատևման, Ներսես Աշտարակեցու օրերից սկսյալ, առավել բացահայտված 1915-ի մեր ազգային մեծագույն ողբերգությունից հետո: Այս է նաև

մեր օրերի հրամայականը, որի վրա են հիմնվում Հայաստանի գոյատևման հետ կապված մեր մտածելու և գործելու բոլոր ուղղություններն ու ապագայի ակնկալությունները:

Ժամանակ է, որ արտասահմանի հայ հասարակական-քաղաքական մտածողությունը ձերբազատվի հնացած, քարացած մտայնություններից, ազգ ու ազգային հասկացությունների վերաբերյալ: Ժամանակ է նաև խորը վերագնահատման ենթարկելու վերջին հարյուր տարիների մեր ազգային-քաղաքական իրադարձությունները:

Ազգությունը անշարժ ու անփոփոխ մի մարմին չէ, այլ բնական մի միավոր, որը աճում ու զարգանում է ինչով որ շահում է դրսից և վերանորոգվում, իր վրայից թոթափելով հնացածն ու մաշվածը: Մի ազգի իրական արժեքը, դա նրա սեփական, տարերային ուժականությունն է, որ նրան մղում է նորը յուրացնելու, նորը ստեղծագործորեն վերստեղծելու, այն չափով, որով նա հեռացնում է իր մարմնից մաշված մասերը:

Հայ ազգը պատմական փորձը ունի փայլուն կերպով իրագործած լինելու այդ պրոցեսը Դ դարում, ստեղծագործորեն ընդունելով քրիստոնեական վարդապետությունը և իր վրայից թոթափելով հեթանոսականը:

Այս ճշմարտությունների լույսի ներքև ես հակված եմ խորհելու, թե արտասահմանում ապրող մեր ժողովրդի մի կարևոր հատվածը, ինչ-որ չափով ետ է մնացել վերանորոգվելու մղումից և գտնվում է այլևս ոչ այժմեական վեճերի հունի մեջ, տեղաքայի դիրքերում քարացած, հետզհետե անհաղորդ արդի կենդանի հայոց հայրենիքի, ապրող ու զարգացող հայրենաբնակ մեր ազգի իրական հարցերին, իրական մտահոգություններին, իրական հնարավորություններին, իրական կենսագործումներին, իրական հեռանկարներին:

Եվ այս անհորիզոն հոսանքին զոհ է գնում նաև Տանն Կրիկիո Կաթողիկոսական Աթոռը՝ տագնապալի կացություններ ստեղծելով արտասահմանի մեր Եկեղեցու կյանքում:

Արտասահմանում հավանաբար գտնվեն անձինք, որոնք մտածեն, թե Կաթողիկոսին հարմար չէ, որ քաղաքական հարցերով զբաղվի ու այդ մասին արտահայտվի: Ես մերժում եմ նման մտայնությունը: Մեր ժողովրդի լինել-չլինելու հարցերի հետ կապված իմ դատողությունները սխալ կլինեն միայն կուսակցությունների մենաշնորհը նկատել: Այո, ես համաձայն եմ, որ հայ հոգևորականը չպետք է զբաղվի միջկուսակցական հակամարտություններով և պարտավոր է վեր կանգնել այդ մակարդակից, լինելով անխտիր բոլորի հայրն ու մխիթարիչը: Սակայն, երբ հարցը վերաբերում է համայն մեր Եկեղեցու և ժողովրդի ճակատագրի հետ կապված հարցերին, հայ հոգևորականը, այո, թե իրավունքը ունի և թե պարտականությունը իր խղճի խոսքն ու հորդորը ասելու: Այսպես են գործել անցյալում մեր Եկեղեցու շատ հայրապետներ ու պատրիարքներ: Եվ թույլ տրվի ինձ այստեղ վկայել, թե նրանք հաճախ եղել են ավելի իրապաշտ ու հեռատես, ավելի դիվանագետ մեր ազգի ճակատագրական պահերին: Բավական է հիշել միայն մի քանիսի անունները՝ Սիմեոն Երևանցի և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսներին, Հովհաննես Կոլոտ և Օրմանյան պատրիարքներին, Խրիմյան և Իվմիրյան կաթողիկոսներին, Փետրոզ Զ և Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսներին, որոնք իրենց ժամանակին, բանիվ և գործով ու երբեմն խիզախությամբ, պաշտպան են կանգնել Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի քաղաքական գերագույն շահերին, զմայելի իրապաշտությամբ և հեռատեսությամբ: Իմ խոսքը նկատեցեք ուղղյալ համայն հայության, արդի և գալիք ժամանակների համար:

Ես խոսեցի վերջին երեսուն տարիներին: Մայր Աթոռում վառված լույսե-

րի մասին: Ես չեմ կարող ասել, թե ինչ չափով դրանք իրավ լուսավոր իրագործումներ եղան: Հավանական է, որ պակաս ու անկատար գործեր մնացին, հավանական է նաև, որ ամեն իրագործում արժանի չէ լուսավոր համարվելու:

Սակայն ինչ որ ստուգապես կարող եմ խոստովանել, այն է, թե իմ ծառայության երեսուն տարիների իրագործումները Ս. Լուսավորչի գահի վրա, լուսավորեցին իմ հոգին, իմ կյանքը: Եվ այս է իմ գերագույն մխիթարությունը:

Այժմ թույլ տվեք վերանորոգել իմ աղոթքը՝

Տեր Աստված հարցն մերոց, տուր խաղաղություն մարդկության համայն, պահիր ու պահպանիր խաղաղությունն ու անվտանգությունը մեր ժողովրդի ի Հայաստան աշխարհի ու ամրապնդիր նրա շինարար առաջընթացը եղբայր ազգերի մեծ ընտանիքում՝ գերագույն երաշխիքը մեր ժողովրդի գոյատևման, գերագույն երաշխիքը մեր ազգային արդար երապանքների իրագործման:

Մայր Հայրենիքի անվտանգությամբ ու նրա շինարար վերելքով է պայմանավորված նաև մեր Մայր Եկեղեցու ու Ս. Էջմիածնի գոյատևումը և ծաղկումը: Ահա թե ինչու առավել ջերմությամբ, իմ ամբողջ հոգով մնում եմ աղոթող, որ հետ այսու երբեք մեր հայրենիքի սահմաններին չմոտենա կրակը՝ պատերազմի, և չմարվեն լույսերը մեր եկեղեցական ներկա ու ապագա կյանքի: Եվ աստվածակառույց ամենայն հայոց Ս. Էջմիածինը անվտանգ ու անկաշկանդ շարունակի իր հոգևոր առաքելությունը՝ լույս և հույս ու մխիթարություն բաշխելով ողջ հայության:

Վերջացնում եմ իմ խոսքը Հովհաննես Գիրազի ներշնչյալ տողերով, որն իբրև մեր օրերի Առաքել Դավրիժեցի պատգամում է բոլորիս՝

«Էջմիածին, Էջմիածին,
Արարատյան դաշտը բուրվառ,
Դու հավիտյան իր խունկը վառ,
Ծխիր հավետ, հար հուրհրա
Թող գեթ ծուխդ Մասիս սուրա»:

Սուրբ Լուսավորչի Աթոռի վրա, երեսուն տարիների ընթացքում, եթե ինձ հաջողվել է մի պահ իմ ձեռքը դնել այդ բուրվառի վրա, ապա ես իմ պարտքը համարում եմ կատարած:

«Ես պահեցից զճանապարհս Տեառն» և «Եղև Տէր հպօրիչ իմ և եհան զիս յանդորր»: «Հատուցէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում» (Սաղմոս ԺԷ 20—23): Ամեն:

Ապա շնորհավորական խոսքով հանդես եկավ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիպար Կ. Մ. Խարչևը:

Հարգելի բանախոսը Սովետական Միության Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի կողմից և հանձնարարությամբ ողջունեց Նորին Սրբության գահակալության երեսնամյակը:

**ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՆՈՒՍՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ**

Մնա՛ց արդյոք որևէ բան, որ ըսված չըլլա, երեկ և այսօր, Վեհափառ Հայրապետի 30-ամյա կաթողիկոսության շրջանին ի գլուխ հանված իրագործումներու մասին: Կարևորը սակայն ըսելը կամ չըսելը, կրկնելը կամ չկրկնելը չէ: Կարևորը այդ իրագործումներու մասին վկայություն տալն է: Մենք այսօր հավաքված ենք այս հանդիսավոր նիստին վկայելու համար, թե Վազգեն Սրբազնագույն կաթողիկոսն Ամենայն Հայոց իրագործած է բազմաթիվ կարևոր նպատակներ, որոնք բարիք բերած են Հայաստանյայց Եկեղեցիին և հայ հավատացյալ ժողովուրդին ընդհանրապես:

Ամենքիս միտքերուն մեջ տեղ գրաված գաղափար մը կամ իրողություն մըն է, թե հայ ժողովուրդը Էջմիածին մը ունի, հիմնված հրաշալի պայմաններու տակ, աստվածային միջամտությամբ և ցուցմունքով: Հայ հավատքի առաջին կոթողն է այդ: Էջմիածինը մեզի համար թե՛ Աստուծո տունն է իր Մայր տաճարով, թե՛ բնակարանն է Ամենայն Հայոց Հայրապետի իր Վեհարանով և թե՛ «հայրենի տունն է հոգիին» ամեն մեկ հայուն: Առաջին հերթին ուրեմն մենք կվկայենք և կհայտարարենք, որ այդ է, որ ըրած է Ամենայն Հայոց Հայրապետը. վերանորոգիչը եղած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մայր Աթոռը դրված է ցանկալի ու պատկառելի կացության մը մեջ, օտարներու հիացման և իրեններու հպարտանքին առարկա դառնալով: Չենք չափազանցեր, եթե հաստատենք, որ Էջմիածինը իր ավելի քան 1680 տարիներու պատմության ընթացքին նման պայծառ և բարեկարգյալ վիճակ չէ ունեցած: Մեր այս վկայության կընկերացնենք ամենքիս երախտիքը այս բարեկարգության հեղինակին ու պատճառին, նույնիսկ մեր Վեհափառ Հայրապետին, այս պարծանքը մեզի պարզևած ըլլալուն համար:

Ուրիշ կարևոր իրողություն է մեզի համար, թե Էջմիածինը հայության համար միության կեդրոն մըն է: Հայ անհատներ կամ հավաքականություններ աշխարհի որ անկյունները ցրված ըլլան, պետք է իրենց կապերը ամուր և կենդանի պահեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Պատմությունը բազմաթիվ դժբախտ փաստեր ունի, որոնք հաստատած են, թե երբ այդ կապերը թուլցած կամ խզված են, կտրված ու կորսված է այդ հավաքականությունը հայ ժողովուրդի ամբողջությունեն:

Այլ իրողություններ և իրագործումներ են, օրինակ, որ Վազգեն Ա Հայրապետի օրով բարձրացավ Հայաստանյայց Եկեղեցվո վարկը միջազգային և միջեկեղեցական շրջանակներու մեջ:

Մենք կվկայենք, թե Վազգեն Վեհափառ Հայրապետն ալ թափ տված է Եկեղեցիներու մերձեցման հոսանքին: Իր օրով Հայ Եկեղեցին անդամ եղավ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Իր օրով սկսած են ավելի բարվոք և սերտ հարաբերությունները մյուս քույր Եկեղեցիներու պետերուն հետ, սկսյալ կաթոլիկ Եկեղեցիի պետեն մինչև օրթոդոքս, անգլիկան և այլ Եկեղեցիներու գլուխները: Մանավանդ Խորհրդային Միության սահմաններու մեջ գտնված օրթոդոքս Եկեղեցիներու՝ Ռուս Պրավոսլավ և վրացական քույր Եկեղեցիներու պետերուն հետ:

Բազմաթիվ անգամներ հիշվեցան և վկայվեցան, թե Ամենայն Հայոց Հայրապետը իր գործոն կարևոր բաժինը բերած է աշխարհի խաղաղության և ժողովուրդներու եղբայրության համար աշխատող բարի կամեցողության տեր մարդոց կողմն թափված ջանքերուն, այսպես միաժամանակ ծառայելով Ավե-

տարանին: Ուր որ հնչած է խաղաղության ձայնը, այդ իր արձագանքը գտած է Վեհափառ Հայրապետի սրտին մեջ:

Սակայն պետք է վկայել նաև, որ Վեհափառ Հայրապետի 30-ամյա կաթողիկոսության շրջանին գտնված են մարդեր, ուր իր բարի ջանքերը և աշխատանքները բախած են մարդկային չկամության ժայռերուն: Ծանոթ են ամենքիս առնվազն երկուքը այդ մարդերեն: Անթիլիալը և Երուսաղեմը: Սակայն այս մարդերու մեջ ևս պետք է վկայել, որ մեր Վեհափառը մարդկայնորեն ըրած է, ինչ որ կարելի էր ընել մեկ կողմեն հանգույցները քակելու և մյուս կողմեն ամրապնդելու Հայ Եկեղեցվո միասնականությունը: Սակայն ոչ միայն իր, այլ նաև ամենքիս, համայն հայության կամքեն ու կարողությունեն վեր ժխտական ուլժեր և չկամություններ արգելք եղած են իր աշխատանքներու դրական արդյունավորման:

Հուսկ ապա՝ հավաքված ենք այստեղ վկայելու և հայտարարելու, թե այս հավաքույթի մեջ գտնվածներս և այն տասնյակ կամ հարյուր հազարները, զորս մենք կներկայացնենք, Ձեր կողքին ենք հավատարմորեն: «Ձբարուք պատերազմ», զոր դուք կվարեք վասն Հայաստանյայց Եկեղեցիի միասնականության, վերեքին ու առավել պայծառության, միասնաբար պիտի մղենք:

Հավարտ բանիս, Վեհափառ Տեր, հանուն համայն Հայաստանյայց Եկեղեցիին, որուն գլուխն եք Դուք, հանուն մեր նվիրապետական Աթոռներուն և եպիսկոպոսական դասուն, որուն եպիսկոպոսապետն եք, ու վերջապես հանուն ամբողջ հայ հոգևորականության և համայն հավատացյալ հայության, որուն ընդհանրական Հայրն եք Դուք, քանի որ սեր կտածեք ամենքի հանդեպ անխտիր, մենք սրտագինս կշնորհավորենք Ձեր Սուրբ Օծությունը իր 30-ամյա գահակալության տարեդարձին առիթով ու կաղոթենք, որ Աստված շարունակե շնորհել զՁեզ մեզի դեռ երկայն ու երկայն տարիներ, լեցուն առողջությամբ, իր փառքին և Հայաստանյայց Եկեղեցվո պարծանքին համար:

Ձեր իրագործումները, Վեհափառ Տեր, պիտի կազմեն Ձեր պեհեր, բայց միշտ երիտասարդ, միշտ առույգ և մշտաթթուն գլխուն շուրջ դափնեպսակ մը, որ երբեք պիտի չթառամի: Այս առթիվ շատեր Ձեր Սուրբ Օծության ընծայաբերեցին թանկարժեք նվերներ: Իսկ մենք, համայն հայությունը, կընծայաբերե իր որդիական սերը և խոր հարգանքը, իր հավատարմական զգացումները և լիակատար համակրանքը, գոչելով միաժամանակ. կեցցե անձնդիր բարի հովիվն հայոց՝ Ս. Ս. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսն Ամենայն Հայոց:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՒԻԱ Բ-Ի ՃԱՌԸ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր մեր Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա:

Մենք ժամանեցինք Ս. Էջմիածին, որպեսզի մեկ անգամ ևս վկայենք մեր եղբայրական սերը մեր եղբայր հայ ժողովրդի նկատմամբ, վկայենք սերը Հայ Եկեղեցու նկատմամբ և շնորհավորենք Ձեզ երեսնամյա Ձեր հորեյանի առթիվ: Քիչ է պատահում, որ կաթողիկոսները արժանանում են այսքան երկարակեցության: Դրա մեջ մենք տեսնում ենք Աստուծո ողորմածությունը Ձեր անձի նկատմամբ և հայ ժողովրդի նկատմամբ:

Նորին Սրբությունը ամբողջ աշխարհին հայտնի է որպես նվիրյալ հոգեվոր սպասավոր Հայ Եկեղեցու, ոգեշունչ հայրենասեր և մեծ մտածող՝ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ասպարեզում:

Չերդ Սրբություն, Չեր ջանքերը Հայ Եկեղեցու կառուցման վերաբերյալ շատ մեծ են: Ինչպես ասում են Չեր գործակիցները, այս տարիների ընթացքում Դուք կատարեցիք այնքան աշխատանք, որքան Չեր նախորդները կկատարեին 200—300 տարվա ընթացքում:

Հայ և Վրաց Եկեղեցիների հարաբերությունները ամրանում են և հետըզհետե ավելի պարզանում: Մեր ժողովուրդների ճակատագիրը եղել է նույնանման: Բավական պատերազմները և ավերածությունները չեն խանգարել մեր ժողովուրդներին ստեղծելու գլուխգործոցներ գրականության, նկարչության և այլ առարկաներում: Մեր ժողովուրդները ոչ միայն ստեղծագործել են, այլ նաև դուրս են առաքել մարդասիրության և բարձր մշակույթի պտուղները: Մեր Եկեղեցիները դաստիարակել են մեր ժողովուրդները: Ամենամեծ արժեքը երկրի վրա ինքը մարդն է: Ամեն մարդկային կյանք անգին է և անկրկնելի: Կային ժամանակներ, երբ ժողովուրդները կարող էին հպարտանալ պատերազմներով և հաղթանակներով: Մարդկային պատմության մեջ քիչ չեն եղել արյունահեղ պատերազմներ, բայց դրանք սահմանափակվում էին տարածքներով: Այսօր գիտա-տեխնիկական հեղափոխությունը արմատական կերպով փոխել է իրերի ընթացքը: Այսօր հայտնվել է իրական տագնապը միջուկային զենքով մարդկանց ոչնչացման: Այսօր ուրախալի է տեսնել, որ մեր Եկեղեցիները աստվածահաճո գործ են կատարում խաղաղության պաշտպանության օգտին: Եվ այդ գործի մեջ մեծ է դերը Չերդ Սրբության:

Չեր գահակալության երեսունամյակի այս նշանավոր օրը հանուն Վրաց Եկեղեցու ի սրտե շնորհավորում եմ Չեզ, Չերդ Սրբություն, և Չեզ հետ միասին ողջ հայ հավատացյալ ժողովրդին: Թող Աստված Չեզ պարզևի առողջություն և երկար տարիների կյանք:

Աստուծո օրհնության ներքո թող ավելի ամրանա և պարզանա բարեկամությունը ժողովուրդների և Եկեղեցիների միջև: Իմ ողջույնի խոսքը ես ուզում եմ ավարտել Պողոս առաքյալի խոսքերով.

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս. Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով» (Եփես. Ա 3—5):

Չերդ Սրբություն, Դուք բավականին գործ եք կատարում Ռուս, Հայ և Վրաց Եկեղեցիների մտեցման և համատեղ գործակցության ճանապարհին: Ի մտի առնելով Չեր մեծ աշխատանքը այս ուղղությամբ և Կաթողիկոսական Աթոռի Չեր բազմելու 30-ամյակը, որոշում ընդունեցինք Չերդ Սրբությանը պարգևատրել Վրաց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գեորգի» շքանշանով:

ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺ ՊԻՄԵՆԻ ԽՈՍՔԸ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Չերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Լրացավ երեսուն տարի այն օրվանից, երբ Աստուծո կամքով Դուք բազմեցիք Ս. Գրիգոր Լուսավորչի փառավոր գահին և դարձաք հաւայն հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր հովիվը:

Անցած երեսուն տարիները եղան Հայ Եկեղեցու ծաղկումի և ամրապնդման ժամանակաշրջան, իսկ դրանում մեծ է Չերդ Սրբության նպաստը:

Չեր անունը սիրելի է հայ հավատացյալի համար, որն ապրում է իր հնա-

գույն և գեղեցիկ հայրենիքում կամ սիռաված է աշխարհով մեկ: Հայ ժողովրդի համար Դուք սիրող հայր եք և հոգևոր առաջնորդ:

Ձեր հովվապետության տարիներին մեծացավ Հայ Առաքելական Եկեղեցու միջազգային հեղինակությունը: Դուք, Ձերդ Սրբություն, այցելել եք բազմաթիվ քրիստոնյա Եկեղեցիներ, ինչպես նաև Սուրբ Էջմիածնում ընդունել եք այդ Եկեղեցիների, կրոնական միությունների և Էկումենիկ Կապակերպությունների բազում ներկայացուցիչների: Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչների ձայնը, այլ արևելյան առաքելական Եկեղեցիների պատգամավորների ձայնի հետ, միշտ հնչում է նաև Համաշխարհային Եկեղեցիների Խորհրդում:

Բազմաշարժար հայ ժողովուրդը ապրեց 1915 թվականի եղեռնի մեծ ողբերգությունը, որ սրտի ցավով հիշում են նոր սերունդները: Եվ որպեսզի նման ողբերգություններ երբեք չկրկնվեն, որպեսզի բոլոր ժողովուրդները ապրեն խաղաղության, համերաշխ և ստեղծագործ համագործակցության մեջ, Դուք, Ձերդ Սրբություն, որպես ճշմարիտ հովիվ և քաղաքացի գտնվում եք խաղաղության մարտիկների առաջին շարքերում: Ձեր խաղաղասիրական ձեռնարկներով և ելույթներով արժանացաք համաշխարհային և սովետական հասարակության լայն զանգվածների խորին հարգանքին: Եվ մենք հավատում ենք, որ Տերը օրհնում է մեր այս համատեղ ջանքերը, որ այդ ջանքերը ուժեղացնում են կրոնական խաղաղարարների ներդրումը ազգերի միջև խաղաղության ամրապնդման գործում:

Ձեր հովվապետական տարիներին ամրացել են եղբայրական սիրո ավանդություն դարձած կապերը Հայ Առաքելական և Ռուս Պապական Եկեղեցիների միջև: Մենք բավմիցս հանդիպել ենք Ձերդ Սրբության հետ Ս. Էջմիածնում և Մոսկվայում՝ վկայելով այս փոխադարձ սերը: Եվ այժմ մենք արտահայտում ենք մեր հաստատուն հույսը, որ եղբայրական կապերը մեր Եկեղեցիների միջև այսուհետև կընդլայնվեն և կխորանան:

Այս մտածումներով, Ձերդ Սրբության նկատմամբ խորունկ սիրով և հավատարմությամբ ես ամբողջ սրտով շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր գահակալության 30-ամյակի առթիվ և աղոթաբար ցանկանում Ձերդ Սրբությանը երկար տարիների կյանք, ուժերի ամրություն և Աստուծո ամենակարող օգնությունը Ձեր քահանայապետական գործունեության մեջ՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Ձեր մեծ հայրենասիրական և խաղաղասիրական ծառայության մեջ:

Առատաբուխ սիրով ի Քրիստոս՝

Պ Ի Մ Ե Ն

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ

Մոսկվա,

29 սեպտեմբերի 1985 թ.

ՌՈՒՐՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Երջանիկ եմ, որ գտնվում եմ Ս. Էջմիածնի մեջ հինգերորդ անգամ՝ հրավերովը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, և հնարավորություն ունեմ Նորին Սրբությանը անձամբ ներկայացնելու անձնապես իմ, իմ պաշտոնեության և Պորտուգալիայի Գ. Կյուպենկյան Հիմնարկության խորին հարգանքն ու ամենաջերմ շնորհավորությունը՝ Ձերդ Սրբության գահակալության 30-ամյակի առթիվ՝ իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց:

Անցնող 20 հուլիսին Նորին Սրբությունը անսահման բարությունն ունեցավ հրապարակելու մի կոնդակ, որով պատվում էր հիշատակը Գալուստ Սարգիս Կյուլպենկյանի՝ ոգեկոչելով 30-ամյա տարեդարձը Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության ստեղծման: Մենք անհունորեն շնորհակալ ենք Նորին Սրբությունից:

Կուլպեի հիշել այստեղ, թե Գալուստ Սարգիս Կյուլպենկյան իր 1953-ին խմբագրած կտակի մեջ, անկախաբար իր անունը կրող Հիմնարկության ստեղծումից, շեշտեց միայն մեկ Հաստատություն՝ Սուրբ Էջմիածինը՝ կտակելով կարևոր մի դրամագլուխ Մայր տաճարի վերանորոգման համար:

1955-ին երբ մահանում էր Գալուստ Կյուլպենկյան, Աստված կամեցավ, որ Նորին Սրբություն Վազգեն Ա ընտրվեր կաթողիկոս և ստանձներ առաքելությունը՝ իրագործելու այս բարեպաշտական իդձը: Նորին Սրբությունը այնքան պայծառությամբ իրագործեց այն, որ կարող ենք ասել, թե իր այս առաջին իրագործումով նա իրագործեց իր առաջին հրաշքը:

Բայց Վեհափառը այդտեղ կանգ չառավ, նա շարունակեց անհոգնաբեկ իր շինարար գործունեությունը այստեղ Սուրբ Էջմիածնի մեջ՝ ի մի հավաքելով արվեստի գործեր մեր բավահավաքամյա Հայաստանի, որոնք մեզ հիացմունքի առարկա են դառնում:

Հովվապետական երեսնամյա այս տարիների ընթացքում Վազգեն կաթողիկոս իմացավ, հրեշտակային համբերությամբ, նուրբ դիվանադիտությամբ և Ս. Գրիգոր Լուսավորչի լուսավոր ներշնչմամբ համախմբել Էջմիածնի Սուրբ Աթոռին շուրջ բոլոր բարի կամեցող հայերը: Իր հոգվույն մեծությունը, իր սրտին ավստությունը, իր գթոտ հաստատակամությունը Հայ եկեղեցիին և Սուրբ Էջմիածնին տվեցին հատուկ փայլ, որ հպարտություն և պատիվ է պատճառում ամբողջ հայության, և հիացմունքի առարկան է դառնում բոլոր օտար այցելուների, որոնք գալիս են աշխարհի բոլոր կողմերից:

Բարեբախտաբար այս վերածնունդը չսահմանափակվեց միայն հոգևոր անդաստանով: Նույն այս շրջանում Սովետական Հայաստանի արձանագրած ընկերային, մշակութային, կրթական, ճարտարարվեստական հառաջդիմությունը արժանի է գնահատանքի:

Ճարտարապետական իրագործումներն ու ազգային հուշարձանները հիացում ու վարմանք են պատճառում ամենափորձառու աչքերի:

Հոգևոր և աշխարհիկ հայկական վերածնունդը մտքի խաբկանք չէ: Այն իրականություն է և հաստատություն:

Վերջացնելուց առաջ պատիվն ունեմ հայտարարելու, թե այս երջանիկ առիթով Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը Վեհափառի տրամադրության տակ է դնում 50.000 դոլլար իր նախատեսած ծրագիրների իրագործման համար՝ համապատասխան հիմնարկության նպատակների:

Թող Աստված Վազգեն կաթողիկոսին պարգևի երկար կյանք՝ վասն բարօրության հայրենիքի և սփյուռքի հայոց:



Հոգեւանոցիստ եղեռնի փոհերի ինչաատակին
(1 իոկտեմբեր 1985 թ.)

*
* *

Հանդիսավոր նիստը ելրափակվեց գեղարվեստական ճոխ հայտագրով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՂԵՌՆԻ ԶՈՒՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 10-ին, ավտոմեքենաների շարասյունը դուրս եկավ Մայր Աթոռից դեպի Երևան՝ գեղատեսիլ Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ ուխտի գնալու Մեծ եղեռնի նահատակների հուշարձանին:

Վեհափառ Հայրապետն ու Վրաց Իլիա Բ կաթողիկոսը եպիսկոպոսաց դասի և սփյուռքահայ հյուրերի ուղեկցությամբ հանդիսավոր քայլքով մոտեցան անմեղ կոհերի հուշարձանին, վետեղեցին խաչանիշ ծաղկեպսակը և խոկուն մտորումներով բոլորվեցին մշտարժարժ կրակի շուրջ:

Տեղի ունեցավ հոգեպարար հոգեհանգիստ հայ նահատակների հիշատակին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին իր շքախմբով ընդունեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիարք Ա. Հասրաթյանն ու Ռ. Չարգարյանը, թեմակալ առաջնորդներ և սփյուռքահայ հասարակական գործիչներ:

Ընդունելությանց պերճ դահլիճում ողջույնի խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը: Ապա պատասխան խոսքով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը շնորհավորեց Նորին Սրբության գահակալության երեսնամյակը և հյուրերին պատմեց մեր հայրենիքի ձեռք բերած նորանոր նվաճումների մասին:


Ջերմ ընդունելության համար շնորհակալական խոսքով հանդես եկան Վրաց Իլիա Բ կաթողիկոսը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Չավեն արքեպիսկոպոս Չինչինյանը և ամերիկահայ հասարակական գործիչ Արշակ Տիգրանյանը:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 2-ին, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանում տեղի ունեցավ եպիսկոպոսական խորհրդակցություն: Վեհափառ Հայրապետը, Կ. Պոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանն ու թեմակալ սրբապան առաջնորդները մտքեր փոխանակեցին Հայ Եկեղեցու այժմեական խնդիրների շուրջ:

*
* *

Հետ խորհրդակցությանց հրապարակվեց հետևյալ Հայտարարությունը:



Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված եպիսկոպոսական դասով